

Ամեն ինչ լավ էր՝ մինչեւ Արման Թաթոյանի վերջին ասուլիսը: Թե ինչ մեղու կծեց նրան այդ ասուլիսի ժամանակ, չեմ կարող ասել: Ախր, ամեն ինչ այնքան հանկարծակի էր ու այնքան «տապոռային»… Մի՞թե Թաթոյանի նման խելացի եւ կազմակերպված մարդը հաշվի չէր առել նման արձագանքը, այլապես ինչո՞ւ պետք է նման բան հայտարարեր:

Կարդացեք՝ էջ 5

Ուլիթկոֆից հետո իսրայելա-պաղեստինյան, ռուս-ուկրաինական հակամարտություններում գլխավոր բանակցողի պարտականությունները կստանձնի Մարկո Ռուբիոն: Դա էական նշանակություն կունենա միջազգային հարաբերությունների համար, քանի որ Թրամփի էքսպերիմենտներից հետո ամերիկյան դիվանագիտությունը կվերադառնա կոնվենցիոն դաշտ:

Կարդացեք՝ էջ 6

Սիբիրի ջրերի տեղափոխման գաղափարի վերածնունդը լոկ տնտեսական կամ ինժեներական նախաձեռնություն չէ: Նման նախագծի իրականացման նախնական փուլում ՌԴ-ն եւ Կենտրոնական Ասիայի երկրները կներքաշվեն գլոբալ աշխարհատնտեսական խաղի մեջ՝ կլիմա, ջուր, ապագա, եւ դրա իրագործումը, անկասկած, ՌԴ-ն կդարձնի «ջրերի տիրակալ»:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 192 (4094), 28 նոյեմբեր, ուրբաթ, 2025

www.hraparak.am

ՔՊ-ում գրեթե վստահ են, որ Ալեն Սիմոնյանը հաջորդ խորհրդարանում չի լինի, որովհետեւ չի համաձայնի շարքային պատգամավորի կարգավիճակին: Ժամանակ առաջ խոսք էր գնում, որ նրան դիտարկում են ՀՀ նախագահի պաշտոնի համար, երբ Վահագն Խաչատուրյանի ժամկետը լրանա, կամ նա վաղաժամ հրաժարական տա: Սակայն կարծես թե այլեւս այդ հարցը չի քննարկվում, Փաշինյանը հիասթափված է Սիմոնյանից, եւ պատճառը մասամբ նրա անձնական կյանքն է: Բացի այդ, նա նոր ֆավորիտներ ունի: Փոխարենը, ըստ ՔՊ-ականների, Ալեն Սիմոնյանն արտոնյալ կարգավիճակում կարող է ապրել եւս 10 տարի, քանի որ եթե արտահերթ ընտրություններ չլինեն, եւ նա պաշտոնավարումն ավարտի հունիսին, ապա, ըստ օրենքի, գտնվելու է պետության պահպանության ներքո եւ առաջիկա 10 տարին ԱԺ պաշտոնաթող նախագահին հասանելիք բոլոր արտոնություններից օգտվելու է, այդ թվում՝ թիկնապահներ, ծառայողական մեքենա, բնակարան եւ այլն, ինչը, ՔՊ-ականների համոզմամբ, Ալեն Սիմոնյանը կնախընտրի ցանկացած պաշտոնից, որը նաեւ պարտականություններ է ենթադրում: Ի դեպ, Ալեն Սիմոնյանը լինելու է ԱԺ առաջին խոսնակը, որը կպաշտոնավարի մինչեւ լիազորությունների ավարտը. նախորդ բոլոր նախագահների պաշտոնավարումը կիսատ է մնացել:

Ինչ ընդդիմադիր դաշտում միսկրծոցին նոր թափ է հավաքում, ՔՊ-ում նախընտրական եռուզեռ է, ամեն երեքշաբթի նախատեսված վարչության նիստերին ՔՊ-ականների քննարկման առանցքային թեման գալիք ընտրություններն են, ընտրությունների նախապատրաստական աշխատանքները: Շաբաթներ առաջ ձեւավորվել է ՔՊ նախընտրական շտաբը, Փաշինյանը թիմին հանձնարարել է՝ մինչեւ տարեվերջ նախընտրական կարգախոս ընտրել, որը տարեսկզբից պետք է սկսեն շրջանառել: Վարչության անդամները պետք է կարգախոսների տարբերակների գրավոր առաջարկներ ներկայացնեն, որոնք կլինեն անխոցելի եւ աշխատող: Ի դեպ, ՔՊ ակտիվի կարծիքով, շտաբում ամենաբարդ եւ պատասխանատու գործը Վահագն Ալեքսանյանինն է, անգամ կատակում են, թե նրանից են կախված ՔՊ-ի հաջողություններն ու անհաջողությունները: Հիշեցնենք, որ Ալեքսանյանն ընտրվել է շտաբի պետի՝ քարոզչության գծով տեղակալ, որը, պատկերավոր ասած, համակարգելու է ոչ միայն ՔՊ-ի քարոզչական բլոկը, այլեւ մեդիատեռոր է իրականացնելու քաղաքական հակառակորդների դեմ: Ինքը՝ Ալեքսանյանը, գրեթե ամենօրյա ռեժիմով ֆեյսբուքյան լայվ է մտնում եւ ՔՊ-ի քարոզչությունն է իրականացնում:

2 լուր. մեկը՝ լավ, մյուսը՝ վատ

Երեկ երկու լուր ցնցեց մեր փոքրիկ երկիրը: Մեկը՝ վատ, մյուսը՝ լավ: Վատ եւ անգամ ողբերգական լուր կարելի էր համարել առավոտյան հրապարակված մի հայտարարություն, որը ստորագրել էին 9 եպիսկոպոսներ եւ որով, ըստ էության, հայտարարել էին Հայ առաքելական եկեղեցում խռովության մեկնարկը՝ Վեհափառին եւ Արշակ սրբազանին ուղղված վիրավորական արտահայտություններով, մարտահրավեր նետելով: 9 սրբազանը, իհարկե, մեծ թիվ չէ ՀԱԵ մաշտաբով, բայց, ինչպես ասում են, մեկ բոռն էլ բավական է՝ մեղրի տակառն ապականելու համար: Բարոյականության եւ Եկեղեցու կանոններն ասում են, որ հայտարարություն տարածելուց առաջ նրանք պետք է Վեհափառին, եկեղեցու կարգապահական հանձնաժողովին, Հոգեւոր խորհրդին եւ իրենց հավատքի եղբայրներին դիմեին, գոնե նախորդ օրը կայացած Եպիսկոպոսաց ժողովի ժամանակ այդ հարցերը բարձրացնեին, այլ ոչ թե ՔՊ-ի հետ համագործակցած, նենգաբար նման բան տարածեին: Սա ոչ եկեղեցական, ոչ մարդկային կանոններով ընդունելի քայլ չէր, եւ պատահական չէր հանրային արձագանքը, որն ավելին էր, քան բացասականը: Բայց թողնենք՝ Եկեղեցին ինքը լուծի իր հարցերը, եւ մենք անցնենք մեր հարցերին, մասնավորապես՝ լավ լուրին, որը երեկ ուրախացրեց շատերին. քաղբանտարկյալ Լիդիա Մանթաշյանն այլեւս ազատության մեջ է, եւ դրանում մեծ է հասարակության դերը, որովհետեւ, եթե մնար նիկոլական քննիչ-դատախազ-դատավորներին, Լիդիան դեռ երկար կնստեր: Երեկ դատարանը՝ հենց դատական նիստի ժամանակ փոխեց նրա խափանման միջոցը, եւ մեղադրողներն էլ չառարկեցին, որովհետեւ շատ մեծ էր կատարվածի նկատմամբ վրդովմունքը, ինչը խոսում է նաեւ այն մասին, որ հանրային կարծիքն իրականում հզոր ուժ է, եւ մենք՝ որպես հանրություն, այդ գործիքից շատ վատ ենք օգտվում: Եթե չասենք՝ առհասարակ չենք օգտվում:

Թեպետ ՔՊ խմբակցության գրեթե բոլոր կանայք էլ առաջադրվել են եւ մեծ հույսեր ունեն, որ հաջորդ ժամկետում էլ կլինեն խորհրդարանում, քանի որ իշխող կուսակցությունում պատրաստված կանանց դեֆիցիտ կա, իսկ ցուցակում՝ կանանց պարտադիր քվոտա, դիցուք՝ 150 հոգանոց ցուցակում առնվազն 50-ը պետք է կին լինի: Սակայն տեղեկություններ կան, որ նրանցից շատերին Փաշինյանը մտադիր է փոխարինել իր կնոջ՝ Աննա Հակոբյանի կրթարշավի մասնակից կանանցով: Թե նրանցից ովքեր են առաջադրվել, մեզ առայժմ չհաջողվեց պարզել, սակայն կարծիք կա, որ ներկայիս պատգամավոր կանանց մեծ մասը համենայնդեպս անցողիկ տեղերում չի լինելու՝ նրանց անունները գրվելու են ցուցակի հետնամասերում:

ԻՍԿ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Երեկ իշխանականները մեծ հրճվանքով տարածում էին «եպիսկոպոսաց հայտարարությունը»՝ գուժելով Վեհափառի կաթողիկոսության «վախճանը»: 9 եպիսկոպոսի ստորագրությամբ նրանք դատապարտում էին Գարեգին Բ-ին՝ Արշակ սրբազանի «սրբապիղծ» արարքը կոծկելու համար: Գրության տակ 13 անունից կազմված ցանկ էր, սակայն ստորագրել է 9 հոգեւորական: Ստորագրողների թվում են՝ ՀԱԵ ԱՄՆ թեմի առաջնորդ Հովնան սրբազանը, Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ Կճոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել Քյարամյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն Ադամյանը, բալթյան երկրների թեմի առաջնորդ Վազգեն Միրզախանյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի նախկին դեկան Անուշավան Ժամկոչյանը, Մասյացոտնի թեմի առաջնորդ Գեւորգ սրբազանը, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես սրբազանը եւ Մայր Աթոռի տեսուչ Արտակ սրբազանը: Երկու անձի՝ Հովնան եւ Սիոն արքեպիսկոպոսների ստորագրության դիմաց գրված է՝ «Ի. Տ.», այսինքն՝ «ի տեղի», ինչը նշանակում է «տեղը, փոխարեն», այսինքն՝ այլ անձինք են ստորագրել: Ստորագրածներից ոմանք իրենց վարքով ու կենսագրությամբ խոցելի են, իսկ Առաքել Քյարամյանի զավակի մասին ողջ աշխարհը գիտի՝ նա Քննչական կոմիտեի նախկին ղեկավար Արգիշտի Քյարամյանն է: Այսինքն՝ Արշակ սրբազանին եւ Վեհափառին մեղադրում են կուսակրոնության ուխտը խախտելու մեջ նրանք, ովքեր նույն մեղքն ունեն իրենց ուսերին՝ ավելի բացահայտ ու ապացուցված: Ի դեպ, Փաշինյանը երեկ խուսափել է այդ հարցից՝ ասելով, որ ինքը ոչ բոլոր հոգեւորականների անձնական կյանքն է ուսումնասիրում: Իսկ օրվա երկրորդ կեսին նա կառավարությունում ընդունել է ըմբոստների խմբին: Ինչ վերաբերում է կաթողիկոսության վախճանին, ապա Մայր Աթոռում 18 եպիսկոպոս կա, 26 արքեպիսկոպոս, որից ընդամենը 9-ն է ստորագրել:

ԵՐԵՎԱՆ

ԱՎԻՆՅԱՆԸ ՏԵՍՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԲԱՅՑ ԱՆԿԱՐՈՂ Է ԼՈՒԾԵԼ

Համացանցում կադրեր են պտտվում (արհեստական բանականության ստեղծած), որտեղ երեւում են հակագազերով շրջող երեւանցիներ: Երեւանն աստիճանաբար սարսափ ֆիլմի գործողությունների վայր է դառնում, իսկ երեւանցիները ֆիքսվել են օդի աղտոտվածության թեմայի վրա, շատերն ամենօրյա ռեժիմով հետեւում են ցուցանիշներին, օդի քարտեզ հրապարակում՝ սարսափելի «բորդո» կետերով, ինդեքսներ, որոնք վտանգավոր

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

են կյանքի համար: «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով, Երեւանի կենտրոնում նոյեմբերի 17-25-ն ընկած ժամանակահատվածում օդում փոշու խտությունը 1,4-4 անգամ գերազանցել է սահմանային թույլատրելիից: Այս տվյալը նոյեմբերի 26-ին հրապարակեց շրջակա միջավայրի նախարարության Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոնի փոխտնօրեն Գայանե Շահնազարյանը: Մյուս վարչական շրջաններում էլ գրեթե նույն թվերն են, որոնք բոլորն էլ վտանգավոր են կյանքի համար:

ԱՎԱՆ-ԱՌԻՆՁՈՒՄ ԱՄԵՆԱԿԵՂՏՈՏ ՕԴՆ Է

Երեւանցիները տագնապում են, օդի աղտոտվածության քարտեզներ են հրապարակում, պատճառների մասին են խոսում: Շատերը սկսել են դիմակով դուրս գալ փողոց, ինչպես քովիդի ժամանակներում: «Լուռ հետեւում էիք՝ ոնց են կանաչը վերացնում, տեղը բարձրահարկ շենքեր կառուցում: Միայն թե փող աշխատեն, նույնիսկ ժողովրդի առողջության հաշվին: «Վիձետի լի», նոր հասկացան, որ օդն աղտոտված ա, իրոք: Դե, անտարբեր, թքած ունեցող մասսա, եթե դուք ձեր հողը չեք սիրում, ուրեմն թուրքը կսիրի: Նիկոլը ճիշտ ա ասում՝ եթե ժողովուրդը դեմ լիներ, ես ոչինչ չէի կարող անել»,- ՖԲ-ում գրել է իրավագետ Աննա Օգանեզովան, իսկ Կապս գյուղի բնակիչ Գոռը Կապսից շշերով մաքուր օդ է հավաքում ու երեւանցիներին առաջարկում պլյուս դնել, որ մի-մի շիշ այդ օդից՝ որպես հումանիտար օգնություն, ուղարկի Երեւան: ԱԳ նախկին փոխնախարար, տարբեր երկրներում, այդ թվում՝ Հնդկաստանում, Բանգլադեշում, Նեպալում, Լիտվայում արտակարգ եւ լիազոր դեսպան աշխատած Արմեն Մարտիրոսյանը դեռ երկու տարի առաջ է օդի մաքրության աստիճանը չափող սարք գնել ու սկսել հետեւել մայրաքաղաքի օդի աղտոտվածությանը: Այդ միտքը ծագել է իր աշխատած երկրներում տիրող էկոլոգիական աղետն անձամբ դիտարկելու ժամանակ: Նոյեմբերի 25-ին նա արձանագրել է՝ Երեւանի օդը մահաբեր է:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԶԱԽՑԻԿ ԵՐԵՎԱՆ

«Ինչպես հայտնի է, չափազանց վտանգավոր է օդում պինդ մասնիկների բարձր մակարդակը (Pm2,5): Երեւանում ներկայում այն նորմայից բարձր է 27 անգամ: Ժամը 12:00-ի դրությամբ Երեւանի օդի աղտոտվածության ցուցանիշը կազմում էր 211, իսկ PM2.5՝ 135.7 մկգ/մ³: Նյու Դելիում՝ ամենաաղտոտված մթնոլորտ ունեցող մայրաքաղաքում, այս նույն ցուցանիշները կազմում են 168 եւ 79.1 մկգ/մ³, համապատասխանաբար: Վտանգավոր է օդում PM2.5 պինդ մասնիկների (particulate matter) բարձր մակարդակը: Եթե այդ ցուցանիշի միջին տարեկան արժեքը Երեւանում գերազանցում է ԱՀԿ-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիայի նորմը (5 մկգ/մ³) առնվազն 5 անգամ, ապա ներկայում այն գերազանցում է ավելի քան 27 անգամ: Այս մասնիկների բարձր մակարդակը Նյու Դելիում մահացության ամենակարեւոր ռիսկի գործոնն է՝ կազմելով 2023 թվականին բոլոր մահերի 15%-ը»,- նշում է դիվանագետը:

Այդ միջոցին քաղաքապետ Տիգրան Ավինյանն էլ Արտաշատի մայրուղուց լայվ է մտնում, թե բա՝ օդի որակն Արտաշատում ավելի վատն է, քան Երեւանում, ու ընդհանրապես՝ նախկիններն են մեղավոր, որովհետեւ «մեր հիմնական խնդիրներն ունեն տասնամյակների պատմություն», պայմանավորված են աշխարհագրական դիրքով, ջեռուցման սեզոնով, հրդեհներով եւ այլն: Այսինքն՝ ամեն ինչով, իր վատ աշխատանքից բացի: Մի քանի օր առաջ էլ Երեւանի քաղաքապետը հորդորում էր տերեւ չայրել, քանի որ այրվող տերեւներն են աղտոտում օդը՝ հասցնելով կրիտիկական ցուցանիշի: Բնականաբար, անկանոն տրված շինթույլտվությունների եւ հնձած, աջ ու ձախ մորթված, ոչնչացված ծառերի մասին Ավինյանը ոչ մի բառ չի ասում: Նրան շատ արագ առարկում են՝ հենց քաղաքապետարանն էլ այրում է հատված ճյուղերը, ընդ որում՝ քաղաքի կենտրոնում: Եվ ծառահատումն արվում է բոլոր սեզոններին ու բարբարոսաբար:

ՃՅՈՒՂ ՈՒ ՏԵՐԵՎ ՎԱՌՈՂԸ ՀԵՆՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆ Է

«Քաղաքապետին տեղյակ պահեք: Օրերս հարցնում էր, ինչ են անում հատված ճյուղերը: Այս մեկը տեսանք…»,- գրել է ավագանու անդամ Քրիստինե Վարդանյանը եւ հրապարակել կադրեր, որտեղ երեւում է, թե ինչպես են քաղաքի կենտրոնում, Ֆուտբոլի ակադեմիայի հարակից տարածքում ճյուղերը վառվում: Փաստորեն, քաղաքապետարանի կանաչապատման ՀՈԱԿ-ը ծառերը կտրում է, հատված ճյուղերն էլ իր իսկ ուժերով այրում՝ հեռու չգնալով: «Լավ, ոնց որ էշի տեղ դնեն: Էդ ինչ նախադասություն է՝ օդի աղտոտվածությունը Երեւանում ունի տասնամյակների պատմություն: Այսինքն: Իսկ ինչ ա արվել, երբ իշխանությունը ձեր ձեռքում էր, ինչ օրենսդրական ակտ, ինչ շոշափելի քայլ, ինչ վերահսկողություն: Հեշտ է սաղ գցել Երեւանի գոգավորության ջեբը, թե բա՝ պետք ա՝ գնացեք շինհրապարակներ, պահանջեք, որ տեխզննումները մեքենաների չլինեն ֆիկտիվ, պահանջեք՝ չայրեն խոտը, խիստ տուգանեք: «Մեզանից չի կախված»-ն ահավոր վատ դիրքորոշում է, ձեզնից լիքը բան է կախված, էդ արեք ու արեք արտակարգ ռեժիմով: Թող շատ բան չփոխվի, բայց գոնե իմանանք, որ մեզ էշի տեղ չեք դնում: Մեկ էլ՝ չի կարելի, պրն Ավինյան, չի կարելի չամրակապվել»,- Ավինյանի՝ Արտաշատի մայրուղուց արված լայվից տպավորված՝ գրում է երեւանցի գործարար Հայկ Մկրտչյանը:

Այս ամենում մի մխիթարանք, այնուամենայնիվ, կա՝ Ավինյանը խնդիրները տեսնում է, գիտի, որ օդը կեղտոտ է, որ քաղաքը գերբեռնված է, երթեւեկել չի լինում, բայց քաղաքային իշխանությունն անկարող է կառավարել, լուծել խնդիրները:

ՎԵՀԱՓԱՌԻ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԸ ՄՏԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Զմենայն հայոց կաթողիկոսի եղբոր ու եղբորորդու դեմ հարուցված գործի քննությունը Քննչական կոմիտեն 20 օրում ավարտել է ու ուղարկել դատարան: Գարեգին Բ կաթողիկոսի մերձավորների դեմ՝ մեկ հոգու ցուցմունքով հարուցված քրեական գործը կայծակնային արագությամբ հասել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան եւ մակագրվել դատավոր Գեւորգ Մանուկյանին:

Հիշեցնենք, որ կաթողիկոսի եղբայրն ու եղբորորդին կալանավորված են իշխող ՔՊ-ի կոալիցիոն գործընկեր «Հանրապետություն» կուսակցության անդամի հաղորդման հիման վրա: Վաղարշապատի համայնքապետի պաշտոնի համար պայքարող նրանց թեկնածուն՝ Հարություն Մկրտչյանը, նախ Ֆեյսբուքում էր գրել, թե Ոսկեհատ գյուղում կաթողիկոսի եղբայրն ու եղբոր տղան խոչընդոտել են իրենց քարոզարշավը, հետո էլ նրանց թիմակիցներից մեկը հաղորդում էր ներկայացրել ոստիկանություն: Ներսիսյանների փաստաբան Արա Զոհրաբյանն այդ ժամանակ հրապարակել էր տեսանյութ, որտեղ երեք անձ պարզապես զրուցում են, եւ որեւէ արտառոց իրավիճակ չկա, այսինքն՝ խոչընդոտելու փաստը չի հաստատվում: Բայց քանի որ տեսանյութը հրապարակվել էր անձայն, հակառակ կողմը պնդում էր, որ հնչել են հայհոյանքներ: Արդյո՞ք հայհոյանքները քարոզարշավը խոչընդոտելու հանգամանք կարող են դիտվել: Ներսիսյանների փաստաբանը պատմել էր, որ կաթողիկոսի եղբորորդին՝ Համբարձումը, «Հանրապետություն» կուսակցության անդամի հետ զրույցում հրաժարվել է մասնակցել սպասվող հավաքին, այդ մարդը փորձել է համոզել, խոսել են, այնուհետեւ մոտեցել է Համբարձումի հայրը՝ Գեւորգ Ներսիսյանը, երեքով խոսել են, այսքանով ավարտվել է ամեն ինչ:

Հիշեցնենք նաեւ, որ Հարություն Մկրտչյանը, ինչպես Նիկոլ Փաշինյանն ու նրա թիմակիցները, պահանջում է կաթողիկոսի հրաժարականը: Վաղարշապատի ընտրություններում «Հանրապետություն» կուսակցությունը ներկայացրած Հարություն Մկրտչյանն անցողիկ նվազագույն շեմը չի հաղթահարել: Ընտրություններն ավարտվել են, սակայն հայր եւ որդի Ներսիսյանները շարունակում են մնալ կալանքի տակ:

Նշենք նաեւ, որ Վեհափառի քրոջ որդին՝ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ սրբազանը եւս կալանքի տակ է: Նա կալանավորվել է հոկտեմբերի 16-ին՝ 2 ամսով: Մկրտիչ սրբազանը մեղադրվում է նախկին քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) եւ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 3-րդ մասով (Հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաեւ՝ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը): Խոսքը 2021-ի ընտրությունների մասին է: Այս բոլոր քրեական վարույթները իրավապաշտպանները համարում են Վեհափառի դեմ սկսված արշավի շրջանակում իրականացված գործողություններ:

Թրքասիրության քարոզ ԵՊՀ-ում

Մենք տեղեկացանք, որ դեկտեմբերի 9-ին, ժամը 14:30-ին ԵՊՀ Սարգիս եւ Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում տեղի կունենա հանդիպում հայ արձակագիր Մարկ Արենի հետ: Մարկ Արենը հայտնի «Անատոլիական պատմություններ» կամ «Այնտեղ, ուր ծաղկում են վայրի վարդերը» գրքի հեղինակն է, որի հիման վրա տարիներ առաջ Հանրային հեռուստաընկերությունը հեռուստասերիալ էր նկարահանել, ինչը բավականին մեծ աղմուկ էր բարձրացրել հեռուստադիտողի մոտ. մարդիկ այնտեղ թրքամետության, թրքասիրության քարոզ էին նկատել:

Ստեղծագործության գլխավոր հերոսը հայատյաց թուրք Մուստաֆա Ղազին է, որն իր կյանքի վերջին փուլում պարզում է, որ ինքը ծագումով հայ է: Ֆիլմում նկարագրվում են նրա ապրումները: Վերջում նա հասկանում է, որ իր ողջ կյանքը սխալ հունով է ընթացել, սակայն այլեւս հնարավոր չէ փոխել այն: Քանի որ մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ իշխանություններն օրուգիշեր թրքասիրություն են քարոզում, բոլորովին զարմանալի չէ, որ նման ստեղծագործությունները մեզանում էկրանավորվում են, իսկ ստեղծագործության հեղինակը հրավիրվում է մայր բուհ՝ ուսանողների հետ քննարկման:

ԱՅԴ ԹՈՒՂԹԸ ՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՔ, ԿՆԿԱՏԵՔ՝ ՈՆՑ ՈՐ ՏԱՐՈՆ ՉԱԽՈՅԱՆԸ ԿԱՄ ՎԱՀԱԳՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ ԳՐԱԾ ԼԻՆԵՆ

ՀԱՅԱՑՔ

Նիկոլ Փաշինյանը երեկ՝ կառավարության նիստից հետո, անդրադարձավ մի քանի բարձրաստիճան հոգեւորականների հայտարարությանը, որն առավոտից շրջանառում էին իշխանամերձ լրատվամիջոցները եւ ՔՊ-ականները: Նա հայտարարեց. «Այդ հայտարարությունը ցույց է տալիս, որ մեր եկեղեցում կան հոգեւորականներ, ովքեր նախանձախնդիր են եկեղեցու հոգեւոր առաքելության իրականացման գործում: Ես, իհարկե, սրբազան հայրերի համաձայնության դեպքում հենց այսօր նրանց կհրավիրեմ հանդիպման, հանդիպում կխնդրեմ, որպեսզի նաեւ նրանց դիրքորոշումները, մոտեցումները՝ հայտարարությունից բխող, ավելի մանրամասն հասկանամ»:

ՔՊ-ական մի շարք ուսապարկեր էլ սկսեցին «ողջունել» եպիսկոպոսների հայտարարությունը եւ «ավետել», թե կաթողիկոսի պաշտոնավարմանն օրեր ու ժամեր են մնացել: Իսկ նշված հայտարարությամբ, որը ստորագրել է 9 եպիսկոպոս, եթե, իհարկե, այն կեղծ չէ, փաստել են, որ փորձաքննությամբ հաստատվել է Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանին վերագրվող տեսանյութերի իսկությունը, իսկ կաթողիկոսն «ամեն գնով փորձում է կոծկել Արշակի սրբապիղծ արարքը»: «Եպիսկոպոսները դիմել են եկեղեցու հավատացյալ եւ նվիրյալ զավակներին՝ սրբության սրբոց Մայր Աթոռ Սբ Էջմիածինը սրբապիղծ հոգեւորականից եւ նրա մեղքը կիսողներից մաքրելու համար՝ խստագույնս դատապարտելով Կտրիճ Ներսիսյանի թյուր ընթացքը»,- նշված է հայտարարության մեջ:

Տեր Վրթանես քահանա Բաղալյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով հոգեւորականներին վերագրվող հայտարարությանը, նկատեց. «Եկեղեցին նման հրապարակային հայտարարություններ երբեք չի անում: Այդ թուղթը որ լավ ուսումնասիրեք, կնկատեք, ոնց որ Տարոն Չախոյանը գրած լինի կամ Վահագն Ալեքսանյանը, կամ նրանք երկուսը միասին, կամ էլ նրանց պես ինչ-որ մեկը: Այդ տեքստը եկեղեցական ոճով գրված տեքստ չէր, ձեւը՝ նույնպես. ՔՊ-ականի ձեւ էր: Իմ նշած մարդիկ են դա գրել: Այն օրինական թուղթ չէր: Չի լինում այնպես, որ հայտարարությունը մի էջի վրա լինի, իսկ ստորագրությունները՝ մյուս: Եվ հետո՝ հայաստանյան թեմական առաջնորդների անունները ես չտեսա: Չտեսա Հովնան սրբազան Հակոբյանի անունը, որը Գուգարաց թեմի առաջնորդն է, չտեսա Մակար սրբազանի ստորագրությունը՝ Սյունիքի թեմի առաջնորդ: Նարեկ սրբազանը հայտարարեց, որ ինքն այդ հայտարարության հետ կապ չունի: Այսինքն՝ ստացվում է, որ թեմական առաջնորդների մեծ մասը չի մասնակցել այդ պրոցեսին: Մեր եկեղեցում երբեք նման հայտարարություններով հարցեր չեն լուծվել: Նույն տրամաբանությամբ՝ այդ չորսհինգ հոգին կարող են հրապարակում ցանկացած մեկի մասին ինչ-որ մի բան պահանջեն, դա չի նշանակում, որ եկեղեցու պահանջ է: Ստորագրությունները պետք է ուղղված լինեն կոնկրետ կառույցի: Օրինակ՝ կարգապահական կառույցին, որն այդպես չէր: Եթե դա էլ են շրջանցում, կարող էին Վեհափառին ուղղել իրենց հրապարակումը: Եթե չկա Վեհափառի անունը, անկախ այն բանից, թե քանի ստորագրություն կա, այն անարժեք է: Մանավանդ որ այդ ստորագրությունների իրական լինելն էլ հիմնավոր չէ: Իսկ եթե անգամ դրանք իրական են, ինձ թվում է՝ ստորագրողներն անգամ տեքստին ծանոթ չեն եղել: Անտրամաբանական հայտարարություն է, ֆեյք էջերով տարածվող, անհիմն: Տեսանյութերի մասով էլ են կեղծում, ես վստահ եմ, որ Արշակ սրբազանին վերագրվող տեսանյութերն իրական չեն, դրանք սարքված են արհեստական բանականության միջոցով: Անզեն աչքով է երեւում, որ սարքված են: Անլուրջ հայտարարություններով հերթական անգամ տգետ մասսայի մոտ փորձում են Եկեղեցու նկատմամբ տրամադրվածություն ստեղծել, բայց մեր Եկեղեցին Ամենայն հայոց հայրապետի կողմից է ղեկավարվում եւ առաջնորդվում: Այս քայլերով Նիկոլ Փաշինյանն ու իր ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ները փորձում են կոպտորեն միջամտել Եկեղեցու ներքին գործերին, ինչն արգելված է Սահմանադրությամբ»:

Հնարավոր է, որ ստորագրող հոգեւորականներին ստիպած կամ սպառնացած լինեն: «Այո, այս իշխանություններից հեռու չէ, սակայն այս փաստաթուղթն այնքան անլուրջ է, որ անգամ նման բան չի երեւում: Անլուրջ փաստաթուղթ է, անլուրջ կերպով հրապարակված: Հերթական հերյուրանքն է, ոչ մի հիմք չկա: Վեհափառը, փառք Աստծո, կարողանում է Եկեղեցին պատշաճ կերպով առաջնորդել: Իշխանությունները լավ կանեն՝ երկրի անվտանգության մասին մտածեն, անգամ այդ հարցերում են անզոր, ուր մնաց՝ Եկեղեցու ներքին հարցերին միջամտեն: Այս ամենը մոտավորապես նման է նրան, որ ասում էին՝ ՀԷՑ-ում միլիոնավոր դրամների յուրացումներ են կատարվում, լիքը ապօրինություններ, սակայն ՀԷՑ-ն ազգային բարերար սեփականատիրոջ ձեռքից խլելուց հետո հայտարարեցին, որ հոսանքի սակագինը չի էժանանալու: Բա եթե միլիոնների յուրացում է արվել, ինչպես խաբում եք հանրությանը, ապա այդ միլիոններն ո՞ւր են գնալու՝ «Իմ քայլը» հիմնադրամ: Նման էժանագին ոճ ունեն այս մարդիկ: Ամեն տեղ պառակտում են, ամեն տեղ լարվածություն ստեղծում, որպեսզի հերթական ապօրինությունը գործեն: Հավանաբար, նորից տարածքներ են զիջելու, այդ ֆոնին լարվածություն են ստեղծում, որպեսզի Եկեղեցին ձայն չբարձրացնի»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԺԱՄԱՆԱԿԸ ԵԿԱՎ՝ ԴԱՐՁԱ». ԳԱԳԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼ Է ՔՊ-ԻՆ

Իշխանական թիմում «չարչարանաց» օրերն ավարտին են մոտենում. նոյեմբերի 30-ին ավարտվում է ՔՊ պատգամավորության թեկնածուների առաջադրման ժամկետը: Մենք գրել էինք, որ շարքային ՔՊ-ականների համար հիմա լարված օրեր են, ոմանք երկու քարի արանքում են հայտնվել. չգիտեն՝ առաջադրվե՞լ, թե՞ չառաջադրվել: Շատերը չգիտեն, թե ինչ սկզբունքով է ձեւավորվելու ընտրացուցակը: Նրանց ասվել է, որ ՔՊ-ն համաժողով է անելու, որի պատվիրակներն են ընտրելու ցուցակի թեկնածուներին՝ այնպես, ինչպես եղավ վարչության ընտրությունը՝ սեպտեմբերին: Սակայն եթե այն դեպքում թեկնածուներն ընդամենը 41-ն էին, եւ անգամ այդ պարագայում՝ էլեկտրոնային հաշվարկն առանց տեխնիկական խոտանների ու հարթ չանցավ, հիմա մարդիկ կասկածներ ունեն, որ 200-300 հոգու ընտրության հաշվարկը չի կարող հարթ ընթանալ: Ոմանք էլ պարզապես հոգնել են քաղաքականությունից եւ շատ են ուզում հեռանալ, բայց լսել են, որ Նիկոլ Փաշինյանը չի ներելու նաեւ չառաջադրվողներին՝ համարելով, որ իր շնորհիվ պատգամավոր դարձած կամ այլ պաշտոն զբաղեցնող ոչ շարքային ՔՊ-ականները 5 տարի բարձր աշխատավարձ են ստացել, կյանքը վայելել, բայց հիմա, երբ դժվար ժամանակներ են եկել, որոշել են թուքումուր ուտող իշխանությունից եւ մանավանդ՝ Փաշինյանից երես թեքել: Ուստի, Փաշինյանի վախից, շատերը հայտնվել են պատանդի, թրաֆիքինգի զոհի կարգավիճակում եւ ստիպված որոշել են առաջադրվել:

Օրինակ, իշխող թիմում մինչեւ վերջերս խոսում էին, որ ՀՀԿ-ից ՔՊ-ի գիրկը թռած Շիրակ Թորոսյանը, որ Նիկոլ Փաշինյանի թիմում արդեն երկու «սռոկ» պատգամավոր է աշխատել, ցանկություն չունի այս անգամ առաջադրվելու, սակայն օրեր առաջ նա հայտը, այնուամենայնիվ, ներկայացրել է՝ թերեւս լսելով, որ չառաջադրվողներին ավելի բարդ փորձություններ են սպասվում, քան առաջադրվողներին: **Շիրակ Թորոսյանը** երեկ մեզ հետ զրույցում հաստատեց իր առաջադրման լուրը: Սակայն վստահեցրեց մեզ, որ չարաջադրվելու ցանկություն չի ունեցել, պարզապես այդպես է ստացվել, որ մի քանի օր առաջ է հայտը ներկայացրել: ՀՀԿ-ից դուրս գալուց հետո Թորոսյանը չի անդամագրվել ՔՊ-ին, հիմա էլ անկուսակցականի կարգավիճակով է առաջադրվել: Այսինքն, եթե գրանցվի թեկնածու, ապա պարտավոր է, Փաշինյանի սահմանած խաղի կանոններով՝ 1.5 միլիոն դրամ վճարել կուսակցական ֆոնդին, որ պատգամավոր դառնա: Իսկ թե ինչու կուսակցական չի դարձել, եւ արդյո՞ք այդ կարգավիճակում իր շանսերը բարձր է գնահատում, Թորոսյանն ասաց, որ այդպես է նպատակահարմար գտել:

Փոխարենը՝ պաշտպանության նախկին փոխնախարար, գեներալ, ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանը, որ 2021 թվականին ՔՊ ցուցակով, բայց անկուսակցականի կարգավիճակով պատգամավոր էր դարձել, օրերս ՔՊ-ի «կրոնն» ընդունել է՝ դարձել է կուսակցական: Նրա մասին էլ էին ասում, որ այս գումարմանն առաջադրվելու ցանկություն չունի, բայց քանի որ չառաջադրվելն էլ է վտանգավոր, Մելքոնյանը գուցե հաշվարկ է արել ու առաջադրվել, բայց 1.5 միլիոնի փոխարեն կես միլիոն է վճարել, քանի որ ՔՊ անդամների համար Փաշինյանը ճկուն զեղչային համակարգ է սահմանել: Կուսակցականները պարտավոր են ընդամենը 500 հազար դրամ վճարել: Ի դեպ, եթե մինչեւ 2018-ը «Ելքի» պատգամավորության ցուցակում ընդգրկվելու համար ցենզ սահմանեին, ասենք՝ 20-30 հազար դրամ, ոչ մեկը չէր վճարի:

Երեքշաբթի օրը Մելքոնյանը մասնակցել է ՔՊ վարչության նիստին եւ ՔՊ ղեկավար կազմին պարզաբանումներ տվել, թե ինչու է ուզում անդամագրվել իշխող կուսակցությանը:

Երեկ մենք **Գագիկ Մելքոնյանին** հարցրինք՝ հե՞շտ ընդունեցին իրենց շարքերը: «Իհարկե»,- պատասխանեց նա: Ինչո՞ւ է որոշել հիմա՝ խորհրդարանի լիազորությունների ավարտից հինգ պակաս անդամակցել ՔՊ-ին, երբ չորսուկես տարի պատգամավոր էր: «Որ հետագայում շարունակեմ աշխատանքներս որպես ՔՊ-ական»: Դա պարտադի՞ր պայման է եղել իր համար: «Չէ, դա պարտադիր չէր, իմ ցանկությունն է»: Մտածում եք, որ որպես անկուսակցական ավելի՞ նվազ շանսեր ունեք, քան եթե լինեք ՔՊ-ական կնիքի ներքո: «Լավ, էլի, պարա՞պ եք մնացել, իմ ցանկությունն է, ամեն մարդ ունի ցանկություն»: Իսկ ինչո՞ւ ավելի վաղ չունեիք նման ցանկություն: «Այո, այո, երբ ավարտվում են խորհրդարանի լիազորությունները, ես նոր ցանկացա դառնալ կուսակցական»: Կատակեցինք՝ խոր ծերությունում էլ ի՞նչ կուսակցական: «Խոր ծերություն չի, նոր սկսում ենք»,- պատասխանեց 68-ամյա պատգամավորը: Իսկ գուցե 1.5 միլիոն դրամ չվճարելո՞ւ համար եք ՔՊ մտել: «Լավ, այ ստեղից կտրեք»: Իսկ ՔՊ-ի գաղափարախոսության հատկապես ո՞ր կետերն են Ձեզ տարել այդ կուսակցություն: «Բոլորը: Հետո որոշել էի, որ դառնա՛յի, եկավ ժամանակը՝ դարձա ու առաջադրվեցի»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՋԵՐՄՈՒԿ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՏԵՐԻՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՍԻՐԵԼԻԻ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

«Հրապարակ»-ը գրել էր, որ Եկեղեցու դեմ արշավի շրջանակներում Նիկոլ Փաշինյանը շատ գոհ է ՀՀԿ-ական հայտնի օլիգարխ Աշոտ Արսենյանի՝ «Ջերմուկի» սեփականատիրոջ որդու՝ Վայոց Ձորի մարզպետ Վահագն Արսենյանի պահվածքից: Դա պայմանավորված է նրանով, որ հենց Վայոց Ձորում էր, որ առաջին անգամ ՀԱԵ թեմի առաջնորդ մասնակցեց պատարագին՝ ի դեմս Վայոց Ձորի թեմի առաջնորդ Աբրահամ սրբազանի: Իսկ Վայոց Ձորի թեմի առաջնորդին պատարագին բերելու հարցում, ասում են, որոշակի դեր է խաղացել նորանշանակ մարզպետը:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

2018-ին գալով իշխանության՝ Նիկոլ Փաշինյանն անմիջապես սկսեց նախկին օլիգարխների եւ պաշտոնյաների գործունեությունն ուսումնասիրել՝ նախկիններին պատժելու օրակարգի շրջանակներում, եւ Սերժ Սարգսյանի ամենամտերիմ գործարարներից մեկը՝ ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Աշոտ Արսենյանը, որ տարիներ շարունակ ՀՀ երրորդ նախագահին ուղեկցում էր Բաղեն-Բաղեն եւ այլ ուղեւորությունների ժամանակ, առաջիններից մեկը հայտնվեց թիրախում: Իրավական գործընթացներ սկսվեցին Արսենյանների նկատմամբ: 2019 թվականի հունիսին Վահագն Արսենյանի՝ զինծառայությունից ազատվելու հիմքով քրեական գործ հարուցվեց, Քրեական օրենսգրքի 327 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հանգամանքներով՝ փաստաթուղթ կեղծելու կամ խաբեության այլ ճանապարհով զինվորական ծառայությունից խուսափելու փաստի առթիվ: Արսենյանի երկու որդիներն էլ, պարզվեց, ազատվել են զինծառայությունից: Ավագ որդին՝ Արսեն Արսենյանը, ուսումնառության ընթացքում ամուսնացել էր եւ զինծառայությունից ազատվել էր ընտանեկան տարկետման՝ երկու երեխա ունենալու հիմքով, իսկ կրտսեր որդին՝ Վահագն Արսենյանը, առողջական հիմքով: Նույն թվականի վերջին Վ. Արսենյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, նրա ներգրավմամբ հարուցված քրեական գործը՝ կարճվել:

Այլ ուշագրավ դեպքեր էլ կան. դեռ 2018 թվականի հունիսին, երբ Փաշինյանը նորաթուխ վարչապետ էր, Սանկտ Պետերբուրգում հայ գործարարների հետ հանդիպման ժամանակ գործարար, ՌԴ քաղաքացի Մուրադ Մուրադյանը հայտարարել էր, որ 90-ականներին իր նկատմամբ Աշոտ Արսենյանը մահափորձ է արել, եւ խնդրել էր բացահայտել, իր խոսքով, իր նկատմամբ իրականացված մահափորձի պատճառները: Գործարարին լսելուց հետո Փաշինյանն ասել էր. «Ես լսեցի այդ պատմությունը, ոչ մի խոչընդոտ չկա, որ այդ պատմությունը մանրամասն քննվի: Ես հիմա չեմ կարող որեւէ գնահատական տալ, դա հաստատ կստուգվի: Իմ այս հայտարարությունը հրապարակային հայտարարություն է, որին հետեւում են լրատվամիջոցների ներկայացուցիչներ, մենք նաեւ ուղիղ եթերում ենք, ես հույս ունեմ, որ իրավապահ մարմինները լսում են եւ նույնիսկ մինչեւ իմ՝ Հայաստան վերադառնալը այս ամեն ինչը կստուգեն: Այդ պատմությունը, որ պատմում եք, թե 6-րդ վարչություն կանչեցին՝ ծեծեցին, կստուգվի»: Դրան արձագանքել էր նաեւ Աշոտ Արսենյանը՝ հայտարարելով, թե փորձ է արվում վարկաբեկել իր անունն ու գործարար համբավը:

Փաշինյանի հայտարարությունն արդյոք լսե՞լ էին իրավապահները՝ այս պահին կդժվարանանք ասել, քանի որ մի քանի ժամ համացանցը փորփրելուց, տարբեր աղբյուրներից հետաքրքրվելուց հետո ոչ մի տեղեկություն չհայտնաբերեցինք՝ ընթացք տրվե՞լ է Մուրադյանի հայտարարություններին, թե՝ ոչ: Մենք գրավոր հարցմամբ կդիմենք Գլխավոր դատախազություն՝ այս հայտարարության ճակատագրի մասին տեղեկանալու համար:

Բայց, ահա, 2019-ից պատկերը սկսել է փոխվել: Այդ ժամանակ հայտնի դարձավ, որ Արսենյանը սկսել է տարբեր «նվիրատվություններ» անել: Դրանցից մեկը 2019-ին էր՝ «Ջերմուկ գրուպը» Երեւանի քաղաքապետարանին ձյուն մաքրելու մեքենաներ էր նվիրել, եւ հենց այդ ժամանակ էլ պարզվեց, որ Արսենյանն Արշակունյաց պողոտայում բարձրահարկ բազմաբնակարան համալիր կառուցելու մեծ թույլտվություն է ստացել, ինչը եւս վկայում էր, որ նախկին ՀՀԿ-ական օլիգարխը ՔՊ-ական օլիգարխի է վերածվել: Դրանից հետո ոչ միայն Վահագն Արսենյանի գործը կարճվեց, այլեւ իշխանությունը նրան նշանակեց Ջերմուկի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ Ջերմուկ համայնքի 2021 թվականի ընտրություններում նա՝ որպես ՔՊ-ի ներկայացուցիչ, հաղթեց: Հետագայում հայտնի դարձավ, որ Արսենյանն այլ «նվերներ» էլ է մատուցել իշխանության բարձրաստիճան բազմաթիվ ներկայացուցիչների՝ մասնավորապես Սուրեն Պապիկյանին, շատ պատգամավորների Արշակունյաց պողոտայում գտնվող համալիրից բավականին նվազ գներով բնակարաններ վաճառելով: Այս ընթացքում ուրիշ տեսարանների էլ ենք ականատես եղել, օրինակ՝ 2024-ին Աննա Հակոբյանին Վահագն Արսենյանը ծաղկեփնջով դիմավորում էր Ջերմուկում եւ աջակցում նրա կրթարշավին: Հիմա էլ, փաստորեն, աջակցում է Եկեղեցու դեմ արշավին, չնայած Արսենյանները Մայր Աթոռի մի շարք հոգեւորականների հետ շատ ջերմ հարաբերություններ ունեն:

ԵԹԵ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ, ՊԵՏՔ Է ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏ ԿԱՆՉԵՆ

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Երեկ համացանցում տարածվել էր Վեհափառ Հայրապետին ուղղված մի գրություն, որի ներքո դրված է ինը եպիսկոպոսի եւ արքեպիսկոպոսի իրական, գուցե՝ կեղծված ստորագրություն: Կեղծարարությունը Փաշինյանի վարչակազմի այցեքարտն է, այնպես որ, եթե վերջնահաշվում պարզվի, որ գրությունը կազմվել է ոչ թե եկեղեցու սպասավորների կողմից, այլ՝ Փաշինյանի կանտորայում, ոչ ոք առանձնապես չի զարմանա: Կամ՝ եթե պարզվի, որ մի տեքստի հետ են հոգեւորականները ծանոթացել, ստորագրել, հետո իրենց ստորագրություններն այլ տեքստի ներքո են հայտնվել, նույնպես ոչ ոք չի զարմանա:

Սակայն եթե համարենք, որ ստորագրություններն իրական են, ապա ճիշտ կլինի, որ եպիսկոպոսները, Արարատյան թեմի առաջնորդից սկսած, ետ կանչեն իրենց ստորագրությունները: Այստեղ խնդիրն ամենեւին Արշակ արք. Խաչատրյանը չէ: Խնդիրը Փաշինյանի կողքին հայտնվելու, նրա անբարո հակաեկեղեցական ու հակաքրիստոնյա արշավին ակամա ծառայելու վտանգն ու նվաստացումն է: Արշակ արքեպիսկոպոսը եթե անգամ աստվածաշնչյան մի կերպար լիներ, 20-25 տարի՝ մի ամբողջ սերնդի կյանք, անփոփոխ լիներ դիվանապետի պաշտոնում, այդ անշարժությունն իր դեմ խմորումներ կառաջացներ: Արշակ արքեպիսկոպոսը կարող է դատապարտելի ոչինչ էլ արած չլինել, բայց երկարամյա անփոփոխ պաշտոնավարումը շատերին հոգնեցրած կարող է լինել, եւ նույնիսկ ենթագիտակցորեն ոմանք կառչեն ներկայացած առիթից՝ նրան հեռացնելու: Էլ չասած, որ Արշակ Սրբազանը կարող է ոմանց կարիերային հավակնություններին խոչընդոտած լինել, այլոց հետ անձնական հակասություններ ունենալ... Ամեն պարագայում պարզ է, որ սովորական ճահճացած մարդկային միջավայրի շարժառիթներ են Արշակ արքեպիսկոպոսի դեմ արշավի հիմքում, այդտեղ ո՛չ կրոնական, ո՛չ հոգեւոր ոչինչ լինել չի կարող: Եթե իրոք տարածված, ամենայն հավանականությամբ, fake տեսանյութերի հայտնվելը լիներ եպիսկոպոսների եւ արքեպիսկոպոսների մտահոգության առարկան ու պատճառը, ապա ի՞նչն էր խոչընդոտում՝ այդ տեսանյութերը եկեղեցու կողմից ուղարկել արտերկիր՝ նույնիսկ ոչ թե մեկ, այլ մի քանի անկախ ծառայությունների՝ փորձաքննության:

Մինչդեռ, դատելով տարածված տեքստից, Վեհափառի տնօրինությամբ կազմված ինչ-որ հանձնախումբ համացանցում Արշակ Սրբազանի վերաբերյալ տարածված տեսանյութերը, որոնց եթե ոչ առաջին, ապա գոնե գլխավոր տարածողը եղել է փաշինյանական civic.am-ը, ուղարկել են փորձաքննության Փաշինյանի կրնկի տակ գտնվող Քննչական կոմիտեում: Այն Փաշինյանի, որը մայիսից ի վեր ամենալկտի բառապաշարով, ամենահետին փողոցայինի վարքով առավոտից երեկո չարախոսում եւ հայհոյում է թե՛ Արշակ Սրբազանին, թե՛ հոգեւորականներին, թե՛ Հայաստանյայց առաքելական եկեղեցուն: Փաշինյանի կամակատար Քննչական կոմիտեին առնչված որեւէ փորձաքննության արդյունքը կարո՞ղ է Փաշինյանի ասածները դակելուց զատ այլ բան լինել: Մանավանդ որ, ինչպես այդ գործով փաստաբան Բաբայանն է փաստում, ՀՀ Քննչական կոմիտեն ոչ մի փորձաքննություն չի էլ իրականացրել:

Իսկ ներկա պահին Փաշինյանը փորձում է իր էությանը համահունչ՝ եկեղեցու հանդեպ իր պառակտչական գործունեությունն ընդլայնել ու խորացնել: Եվ այն բանից հետո, ինչ հայտարարել է եւ անում է Փաշինյանը, բոլոր այն եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները, ովքեր ստորագրել էին Արշակ արքեպիսկոպոսի դեմ գրության ներքո, ակնհայտ է, որ անմեղ բան չեն արել: Այդ հայտարարությամբ, որով հավակնում էին Վեհափառի վրա ստվեր նետել, եթե չեն հասել Հիսուսի, եկեղեցու եւ հայության հանդեպ դավաճանություն գործելու մեղքին, ապա Փաշինյանի՝ այսօրվա արգահատելի միջամտությունից հետո արժե հրապարակավ հայտարարեն, որ ետ են կանչում իրենց ստորագրությունները եւ դադարեցնում են որեւէ գործողություն այնքան ժամանակ, քանի դեռ Փաշինյանը գտնվում է իշխանության ղեկին:

Մի քանի ամսից Փաշինյանը, հուսանք, այլեւս չի լինի իշխանությունում: Հետեւաբար, մի քանի ամիս կարելի է դիմանալ, Արշակ Սրբազանի քառորդդարյա պաշտոնավարումից ծագած դժգոհություն-խռովությունը զսպել եւ եկեղեցու ներսում որեւէ մեկի դեմ որեւէ քայլ չկատարել: Իսկ Փաշինյանի՝ իշխանությունից հեռանալուց հետո, ի սեր Աստծո, արդեն հոգեւորականների եւ եկեղեցու ներքին գործն է՝ ում դեմ ինչ կձեռնարկեն, ինչ կքննեն, ում կհեռացնեն պաշտոնից եւ ինչ արդյունքի կհասնեն: Այսօր, սակայն, Հայաստանյայց առաքելական եկեղեցու դեմ ամենանողկալի, ստոր, դավադիր ու սրբապիղծ արշավն է ընթանում՝ երբեւէ պատմության մեջ չեղած: Հետեւաբար, քանի դեռ թշնամին կանգուն է եւ արշավում է, եկեղեցում չպետք է լինեն ներքին ընդդիմություն, պառակտում կամ խլրտում:

ՀԳ. *Փաշինյանի հետ եպիսկոպոսների հանդիպման կադրերը տհաճ էին, սակայն գրության եւ ստորագրությունների առումով ոչինչ չհստակեցրին:*

ՀԱՊԿ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՆՔԸ ՉԻ ՈՐՈՇԵԼ, ՆՐԱՆ ՀՐԱՄԱՅԵԼ ԵՆ

Նոյեմբերի 27-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում տեղի ունեցող ՀԱՊԿ հերթական տարեկան գագաթնաժողովին հանդիպելու են կազմակերպության անդամ երկրների նախագահները: Հայաստանն այդ կազմակերպության անդամ է, սակայն ներկա չի լինելու գագաթնաժողովին՝ արդեն երրորդ տարին անընդմեջ: ՀԱՊԿ վերջին գագաթնաժողովը, որին Հայաստանը մասնակցել է, 2022 թվականին Երեւանում տեղի ունեցած գագաթնաժողովն էր, հաջորդ տարվա՝ 2023 թվականին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայացած գագաթնաժողովին Հայաստանը չմասնակցեց՝ դե ֆակտո դադարեցնելով իր անդամակցությունն այդ կազմակերպությանը: Հայաստանն այդ միջոցառմանը կամավո՞ր չի մասնակցում, թե՞ Հայաստանին չեն թողնում, հարցը միայն Հայաստանի ֆորմալ մասնակցել-չմասնակցելը չէ, ՀԱՊԿ-ի աշխատանքներին մասնակցելու արգելքը բացահայտում է ներքաղաքական եւ արտաքին քաղաքական այլ շերտեր եւս, բացահայտում է Հայաստանի ինքնիշխանության լիակատար բացակայությունը, նրա վասալային կախվածությունը:

2022 թվականի նոյեմբերի 23-ին Հայաստանում կայացած ՀԱՊԿ գագաթնաժողովից առաջ տեղի էր ունեցել մի շատ կարեւոր իրադարձություն, ընդամենը երկու ամիս առաջ՝ սեպտեմբերի 12-14-ին, Ադրբեջանը հարձակվել էր Հայաստանի վրա եւ գրավել ռազմավարական նշանակության տարածքներ, Հայաստանը զգալի մարդկային եւ տարածքային կորուստներ էր ունեցել: Հայաստանում տեղի ունեցած ՀԱՊԿ գագաթնաժողովի ժամանակ առաջարկվեց, որ կազմակերպությունը կազմի դիտորդական առաքելություն, որը կուսումնասիրի իրավիճակը սահմանագոտում եւ եզրակացություն կներկայացնի կազմակերպությանն ու անդամ երկրներին, սակայն Հայաստանի իշխանությունը պահանջում էր, որ կազմակերպությունն իր կողմից ընդունվելիք փաստաթղթում Ադրբեջանին ճանաչի ագրեսոր, ինչը փաստացի նշանակում էր պատերազմ հայտարարել Ադրբեջանին. ըստ կազմակերպության կանոնադրության՝ կազմակերպության մի անդամի դեմ հարձակումը համարվում է հարձակում կազմակերպության մյուս անդամ երկրների վրա, եւ գործում է համատեղ պաշտպանության մեխանիզմը: Հայաստանի իշխանությունն ուզում էր ՀԱՊԿ-ին, ավելի ճիշտ՝ Ռուսաստանին, Ադրբեջանի դեմ պատերազմի մեջ ներքաշել, բնական է, որ Ռուսաստանը չցանկացավ մասնակից դառնալ Փաշինյանի կազմակերպած պրովոկացիային, որի հիմնական նպատակն Ուկրաինայի դեմ պատերազմող Ռուսաստանի համար նոր ռազմաճակատ բացելն էր, ինչի մասին այդքան երազում են Արեւմուտքում: Փաշինյանն այդ պատրվակն օգտագործեց ՀԱՊԿ-ին անգործունակության մեջ մեղադրելու համար՝ դրանով պատճառաբանելով հետագայում կազմակերպության աշխատանքների շարունակական բոյկոտը:

Կարելի է ենթադրել, որ սեպտեմբերին Հայաստանի դեմ Ադրբեջանի հարձակումը նախօրոք պլանավորված եւ իրականացված օպերացիա էր, որի նպատակը հենց Ռուսաստանին նման երկընտրանքի առաջ դնելն էր՝ կամ Ռուսաստանը պատերազմ է սկսում Ադրբեջանի դեմ, կամ Հայաստանը դադարում է լինել ՀԱՊԿ անդամ: Կարելի է մտածել նաեւ, որ Հայաստանի իշխանությունը տեղյակ է եղել այդ ծրագրին եւ դրա մաս է կազմել, այն շահագրգռությամբ, որ դրանով լեգիտիմ հնարավորություն է ստանում՝ խզելու հարաբերությունները ՀԱՊԿ-ի հետ, Ռուսաստանին հռչակելով Հայաստանի անվտանգության սպառնալիք: Ճշմարտությունը պարզ կլինի միայն արդար դատաքննության արդյունքում, եթե այդպիսին երբեւէ տեղի ունենա: Եվրամիության արտաքին հարցերի հանձնակատար Կայա Կալլասն ասում է, որ իրենց նպատակը Ռուսաստանին թուլացնելն է, իրենք օգնում են Ուկրաինային որ նա պատերազմի Ռուսաստանի դեմ, եւ այդ պատերազմը թուլացնում է Ռուսաստանին: Իրականում, Եվրամիությունը չի օգնում Ուկրաինային, այլ օգնում է Ուկրաինայի իշխանությանը, քանի որ բացահայտված կոռուպցիայի փաստերն ապացուցում են, որ դրսից տրվող բազմամիլիարդանոց օգնությունից օգտվում են Ուկրաինայի իշխանության ներկայացուցիչները՝ կուտակելով հարյուր միլիոնավոր, միլիարդավոր դոլարների հարստություն, իսկ Ուկրաինան զոհի կարգավիճակում է, կորցնում է հարյուր հազարավոր իր ամենախիզախ ու պայքարող զավակներին, կորցնում է տարածքներ եւ տնտեսական կարողություններ: Եվրամիությունը ոչ միայն ուկրաինական ռազմաճակատում է կռվում Ռուսաստանի դեմ, այլեւ՝ Հարավային Կովկասի. այստեղ ԵՄ դաշնակիցը կամ իրականում մատաղացու գառը Հայաստանն է: Եվրամիությունն օժանդակում է Նիկոլ Փաշինյանի իշխանությանը բացառապես մի բանի՝ Փաշինյանի հակառուսական քաղաքականության համար: Փաշինյանը եւ իր շրջապատը ԵՄ օժանդակության շնորհիվ պահում են իշխանությունը եւ հարստություն են կուտակում, իսկ Հայաստանը ներքաշվում է տարբեր հակառուսական ավանտյուրաներում, արդյունքում կորցնում է Արցախը, միջազգայնորեն ճանաչված իր տարածքները, հազարավոր մարդկային կյանքեր:

Եվրամիության իրական շահերը մեր տարածաշրջանում անմիջականորեն կապված են Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ, Ադրբեջանը միլիարդավոր խորանարդ մետր գազ է արտահանում ԵՄ, Թուրքիան տարանցման ճանապարհ է եւ իրացման հսկայական շուկա, Հայաստանը՝ այդ երկրներից ավելին ստանալու համար զոհաբերվող գառ:

ՀԱՊԿ աշխատանքներին չմասնակցելը Հայաստանի ինքնիշխան որոշումը չէ, Եվրամիությունը, Թուրքիան եւ Ադրբեջանն են արգելում Հայաստանին՝ մասնակցել ՀԱՊԿ գագաթնաժողովներին, քանի որ այդ երկրները Ռուսաստանին համարում են իրենց թշնամի, իսկ իրենց վասալությունն ընդունած Հայաստանի իրավունք չունի բարեկամություն անել իրենց թշնամու հետ, ՀԱՊԿ-ն էլ ռազմաքաղաքական բարեկամության մասին է: Ո՞նց կարող է Հայաստանը ՀԱՊԿ անդամ լինել, եթե այդ կազմակերպության հիմնական երկիրը՝ Ռուսաստանը, պատերազմում է իր սյուզերենի, տիրոջ՝ Եվրամիության դեմ:

Թուրքիան կամ Ադրբեջանը չեն կարող իրենց դաշնակից, թուրքական պետությունների կազմակերպության անդամ Ղազախստանին կամ Ղրղզստանին արգելել՝ մասնակցելու ՀԱՊԿ աշխատանքներին, քանի որ այդ երկրները որքան էլ իրար բարեկամ, ազգակից եւ դաշնակից լինեն, ունեն սեփական շահեր եւ ամենակարեւորը՝ ինքնիշխան որոշումներ կայացնելու իրավունք ու թույլ չեն տա, որ դրանք որեւէ մեկը սահմանափակի: Մինչդեռ Հայաստանը զրկված է այդ իրավունքից: Երբ խոսք է գնում Փաշինյանին իշխանությունից հեռացնելու մասին, դրա ամենակարեւոր իմաստը Հայաստանի ինքնիշխանության վերականգնումն է, Հայաստանը վասալային կախվածությունից եւ գերությունից ազատագրելը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԲԱՐԵԽՈՍԵՆՔ ԽԵՂՃ ՀՈՒՍԱՐԻ ՀԱՄԱՐ

Վստահաբար կարելի է ասել, որ «Միասնության թեւերով» քաղաքական դաշտ իջած Արման Թաթոյան առաջին օրերին համակիրների լավ շրջանակ ուներ: Քիչ չէին մարդիկ, որ, հաշվի առնելով մարդու իրավունքների պաշտպանի նրա նախընթաց գործունեությունը եւ մարդկային նկարագիրը, պատրաստ էին քաղաքական ճանապարհ գնալ նրա հետ: Քաղաքականության մեջ նոր դեմք էր, իսկ դա բավական էր, որ քաղաքական արդեն եղած դեմքերից «հոգնած» հանրության մի մեծ հատված, այն հատվածը, որ միշտ ասում է՝ ա՛, մեկ է, մասնակցենք ընտրություններին, թե չմասնակցենք, արդյունքը որոշված է վերեւներում, հետաքրքրություն ցուցաբերի նրա հանդեպ: Մի խոսքով՝ սկիզբը խոստումնալից էր, կողքին էլ խելացի մարդիկ կային, եւ Թաթոյանն անգամ կարիք չուներ հատուկ քայլեր անելու քաղաքական դաշտում վստահություն, ներողություն արտահայտությանս համար՝ տարատեսակ քաղաքական բոմժերից տարանջատվելու համար:

Ամեն ինչ լավ էր՝ մինչեւ Արման Թաթոյանի վերջին ասուլիսը: Թե ինչ մեղու կծեց նրան այդ ասուլիսի ժամանակ, չեմ կարող ասել: Ախր, ամեն ինչ այնքան հանկարծակի էր ու այնքան «տապոռային»... Միթե Թաթոյանի նման խելացի եւ կազմակերպված մարդը հաշվի չէր առել նման արձագանքը: Այլապես ինչո՞ւ պետք է հայտարարեր, որ նախկին նախագահները, եթե ուզում են Նիկոլը պարտվի, պետք է դուրս գան քաղաքականությունից եւ չմասնակցեն 26թ. ընտրություններին: Երեկ՝ մեկ, այսօր՝ երկու, մտել ես քաղաքականություն՝ համարյա դժոխք, եւ սկսում ես թրատե՜լ... Մի հատ արի տեսնենք՝ ով ում բարեկամն է, ով ինչ փորացավով է այդ դժոխքում հայտնվել, մարդիկ արած ունեն, չունեն, անելիք ունեն, չունեն... Փոխանակ աջակիցներ փնտրելու, Նիկոլից ավելի Նիկոլ եք ձեւանում, պարոն Թաթոյան: Պաշտոնյաների վիզը կպտկեմ, չգիտեմ ինչեր կանեմ... Որտեղի՞ց իրավաբան մարդուն այսքան պոպուլիզմ, պարոն Թաթոյան:

Ինչեւէ, հետո պարզվեց, որ Արման Թաթոյանին մեղուն ավելի շուտ էր կծել: Պարզողներն էլ սոցիալական կայքերն էին՝ իրենց տեսանելի եւ անտեսանելի հեղինակներով: Ես նրանց այնքան էլ չեմ վստահում, բայց այն, ինչ Թաթոյանի մասին գրվում եւ ասվում էր ասուլիսին հաջորդած ժամերին, կարող էր նաեւ հեռու չլինել իրականությունից: Ավելի ճիշտ՝ մեր կյանքից, մեր տեսածից, մեր պատկերացումներից եւ մեր զգացածից: Պարոն Թաթոյան, Դուք, առանց անուններ տալու, կրկնել էիք Նիկոլ Փաշինյանի հայտնի խոսքը ՀՀ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի մասին՝ քանի նրանք կլինեն, ես կլինեմ վարչապետ: Ո՞վ Ձեզ խորհուրդ տվեց այդպիսի բան անել: Կամ Դուք ինձ այդ «մեղվի» տեղը ցույց կտաք, կամ ես, ինչքան ուժ ունեմ, կմերժեմ Ձեզ: Սոցիալական կայքերը Ձեզ ում դուռն ասես, որ չտարան, ինչ անուն ասես, որ չկպցրին, էլ բան չմնաց, որ չհիշեին ՄԻՊ պաշտոնում Ձեր աշխատած տարիներից: Այնպես արեք, որ ես էլ ինձ նման շատերն այդ ամենին չհավատանք: Թույլ տվեք ինձ հիշել այն Արման Թաթոյանին, որին ընդդիմությունը նույնիսկ ուզում էր միասնական թեկնածու դարձնել, այն Արման Թաթոյանին, որ այն ժամանակ համեստություն ունեցավ եւ հայտարարեց, որ դրա համար ինքը կուզենար ունենալ ՀՀ նախագահների հավանությունը:

Ամենեւին տուրք չտալով սոցիալական կայքերում բարձրացած աղմուկներին՝ կուզենայի պարոն Թաթոյանին երկու բան հուշել: Պարոն Թաթոյան, եթե դեռ չեք փոշմանել քաղաքականություն մտնելու համար, ապա Ձեր թիմին կամ, ինչպես անվանում եք՝ շարժմանը, անկողմնակալ քաղտեխնոլոգներ են պետք՝ մարդիկ, որոնք ոչ միայն Ձեզ կասեն ինչ անել, այլեւ՝ ինչ չանել, ինչ ասել եւ ինչի մասին լռել: Եվ ամենակարեւորը՝ իրենց խորհուրդներով այդ մարդիկ Ձեզ կսովորեցնեն տարբերվել մյուսներից... Եթե անկախ եք, կսովորեցնեն՝ երեւալ ավելի անկախ, եթե ունեք սեփական ծրագրեր ու գաղափարներ, կօգնեն՝ դրանք ավելի ցայտուն եւ հասկանալի դարձնել հանրության աչքին: Եվ ապա՝ գործել ընդդիմության դաշտում եւ քարեր նետել ընդդիմության բոստանը՝ նշանակում է լինել ընդդիմության ընդդիմություն, իսկ դա էլ իր հերթին նշանակում է՝ դույլով ջուր կրել իշխանության ջրաղացի համար: Հասկանում եմ, Դուք նոր մարդ եք քաղաքականության մեջ, բայց, միեւնույն է, քաղաքականության մեջ էլ ամեն ինչ սովորում են այբուբենից:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan @hraparak.am

ԱՄՆ

ՈՒԻԹԿՈՖԸ ԿՀԵՌԱՆԱ, ՌՈՒԲԻՈՅԻ ԴԻՐՔԵՐԸ ԿԱՄՐԱՊՆԴՎԵ՞Ն

Վաշինգտոնյան օրացույցով՝ նոյեմբերի 25-ի երեկոյան, մինչ Երեւանում արդեն նոյեմբերի 26-ն էր եւ կեսգիշեր, պայթեց Սպիտակ տանն առնչվող հերթական սկանդալը, որը, ենթադրելի է, ասպարեզից կհեռացնի ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց, իսրայելա-պաղեստինյան եւ ռուս-ուկրաինական հակամարտությունների հարցերով գլխավոր բանակցող, նախկին իրավաբան եւ անշարժ գույքի գործակալ, Թրամփի գործընկեր եւ մտերիմ Սթիվ Ուիթկոֆին:

Նոյեմբերի 25-ի երեկոյան Bloomberg գործակալությունը հրապարակեց իր տրամադրության ներքո հայտնված մի հեռախոսազրույցի սղագրություն, որը կայացել էր հոկտեմբերի 14-ին՝ Սթիվ Ուիթկոֆի եւ ՌԴ նախագահի միջազգային հարցերով խորհրդական, թե օգնական Յուրի Ուշակովի միջեւ: Bloomberg-ի մոտ հայտնվել էր զրույցի բուն ձայնագրությունը, որը գործակալությունը հրապարակեց տպագիր տեքստով: Սղագրությունն անմիջապես, որպես breaking news, տարածվեց միջազգային լրատվամիջոցներով, հասանելի էր բազմաթիվ կայքերից, նաեւ՝ հայկական ՁԼՄ-ներից:

Այս սկանդալի պայթելուց հետո ամենահաջող հարցադրումը կատարել էր լոնդոնյան Deily Telegraph-ը: Գրել էին՝ հետաքրքիր է, եթե Ուիթկոֆը լիներ Ռուսաստանի հավաքագրված գործակալ, կկարողանա՞ր ինչ-որ բան ավելի անել: ԱՄՆ սենատորների ու կոնգրեսականների մոտ, այդ թվում՝ Հանրապետական կուսակցությունից, Ուիթկոֆ-Ուշակով հեռախոսազրույցի սղագրությունը, սակայն սրամտելու մեծ տրամադրություն չէր առաջացրել: Նրանք ուղիղ տեքստով քննադատում էին Ուիթկոֆին, պահանջում նրա հեռացումն ասպարեզից, եւ որ թույլ տրվի՝ պետքարտուղար Ռուբիոն նորմալ աշխատի:

Թրամփը ճարահատյալ միջամտեց գեներացող սկանդալին, հեքիաթ պատմեց, իբր ինքը սղագրությունը չի տեսել, բայց իրեն ասել են, թե սովորական հեռախոսային խոսակցություն է եղել, art of dealing-ը՝ գործարքներ կնքելու արվեստը հենց այդպիսին է, պետք է դիմացինիդ տրամադրես, երբ հարկ է՝ շողոքորթես, կարողանաս վաճառել-վաճառվել, գնել-գնվել, Ուիթկոֆն ուկրաինացիների հետ էլ է այդպես բանակցում եւ այլն: Մի խոսքով, ունկնդիրների ականջներից կախվող լապշաներ... Սակայն թե՛ քաղաքական, թե՛ լրատվական շրջանակների գնահատականն այն է, որ Bloomberg-ի արտահոսքով Ուիթկոֆի գործունեության դամբանականը գրվեց:

Գարնանն էլ Թրամփի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Մայք Վալցի շուրջ սկանդալը պայթեց. նա The Atlantic-ի խմբագրին՝ պատահմամբ, սխալմամբ, թե գիտակցաբար, հրավիրել էր Signal App-ի փակ շփման խումբ, որտեղ ԱՄՆ պաշտպանության քարտուղար Փիթ Հեգսեթը ուղիղ ժամանակային ռեժիմով տեղադրում էր հութիների դեմ ռազմական գործողության մանրամասները, որոնք մի 15-30 րոպե հետո դառնում էին իրականություն: Այն, որ ԱՄՆ ազգային անվտանգության մեկ տասնյակի չափ պատասխանատուներ՝ CIA-ից, FBI-ից մինչեւ Պենտագոն ու Պետդեպ, բջջային հեռախոսի հավելվածով ռազմական գործողության մանրամասներ են քննարկում եւ ընթացքին հետեւում, ԱՄՆ-ում մարդկանց շոկի մեջ գցեց: Թրամփն այն ժամանակ էլ լապշաներ կախեց, իբր արտասովոր ոչինչ չի պատահել, լրատվամիջոցներն են արհեստական սկանդալ բարձրացնում, բայց մեկ ամիս էլ չանցած՝ Մայք Վալցն այլեւս իր պաշտոնում չէր եւ հեռացել էր Սպիտակ տան վարչակազմից: Շատերի կարծիքով, Ուիթկոֆի դիվանագիտական գործունեության վերջաբանն էլ նույնկերպ կլինի:

Գալով հարցին, թե ով կարող էր Bloomberg-ին հասած հեռախոսազրույցի արտահոսքը կազմակերպել՝ ենթադրությունները տարբեր են: Առավել հավանական է այն, որ եվրոպական երկրներից խոսակցությունը լրտեսական միջոցներով ձայնագրված լինի, ներկա պահին էլ ըստ անհրաժեշտության տարածեն՝ հավելյալ ճնշում գործադրելու եւ ցույց տալու համար, որ Թրամփը չի տարբերում՝ ում համար է աշխատում, ում շահերն է պաշտպանում, նա ռուսական 28-կետանոց ծրագիր է ԱՄՆ-ի կողմից ասպարեզ բերել: Ի դեպ, Bloomberg-ը, Ուիթկոֆ-Ուշակով հեռախոսազրույցից բացի, նաեւ Յուրի Ուշակովի եւ մեկ այլ ռուս պաշտոնյայի միջեւ կայացած երկրորդ հեռախոսազրույցի սղագրություն է հրապարակել, որտեղ խոսակիցներն ասում են, թե շրջանառվող «28 կետը» համարյա լիովին կրկնում է ռուսական ծրագիրը:

Սպիտակ տունը, անհարմար վիճակից դուրս գալու համար, մեկնաբանել է կամ գուցե խոստովանել է միայն մինչեւ ՍՄՆ-ում նոյեմբերին տոնվող Thanksgiving Day-ը (այս տարի նշվում է նոյեմբերի 27-ին), այլեւ մինչեւ Ամանոր ռուս-ուկրաինական հակամարտությունում համաձայնություններ հասնելը Վաշինգտոնում էլ լուրջ կամ հավանական չեն համարում:

Այնպես որ, «28 կետի» միակ շոշափելի արդյունքը, հավանաբար, լինելու է Սթիվ Ուիթկոֆի հեռացումն ասպարեզից: Հանուն արդարության պետք է նշել, որ դեռ գարնանը ամերիկյան մամուլում կային նման խոսակցություններ, թե Ուիթկոֆն օգնում է Թրամփին, քանի որ վայելում է նրա բացարձակ վստահությունը, բայց մտադիր չէ ողջ կյանքում կամ Թրամփի նախագահության ողջ շրջանում բանագնաց լինել, մինչեւ տարեվերջ հեռանալու է: Մանավանդ՝ անցյալ տարի կնոջից բաժանվել է (շուրջ 40-ամյա համատեղ կյանքից, ամուսնությունից հետո), հիմա նոր սիրուհի ունի, մարդը ցանկանում է ապրել, կյանքը վայելել եւ մինչեւ տարեվերջ բանագնացի պարտականությունները վայր է դնելու:

Քաղաքականության մեջ, սակայն, հետաքրքիրը հեռացողները չեն, այլ՝ մնացողները եւ նոր եկողները: Գարնանը, երբ Մայք Վալցը հեռացավ ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի պաշտոնից, խորհրդականի պարտականությունները տրվեցին պետքարտուղար Մարկո Ռուբիոյին: 2025-ի մայիսի 1-ից պետքարտուղար լինելուն զուգահեռ, Ռուբիոն նաեւ Ազգային անվտանգության հարցերով խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատարն է: Միանգամայն սպասելի է, որ Ուիթկոֆի հեռանալուց հետո իսրայելա-պաղեստինյան եւ ռուս-ուկրաինական հակամարտություններում գլխավոր բանակցողի պարտականությունները նույնպես ստանձնի Մարկո Ռուբիոն: Դա էական նշանակություն կունենա միջազգային հարաբերությունների համար, քանի որ Թրամփի ինքնահնար մեթոդներից ու էքսպերիմենտներից հետո ամերիկյան դիվանագիտությունը վերստին կվերադառնա կոնվենցիոն դաշտ: Մարկո Ռուբիոյի դիրքերի նման ամրապնդումը սպասելի է, որ դրական նշանակության ունենա Հայաստանի համար: ՀՀ-ԱՄՆ հարաբերություններում օրակարգային առաջնահերթությունը՝ թե՛ ԱՄՆ-ի, թե՛ Հայաստանի տեսակետից, իհարկե, Կիլիկիայի եւ Միջերկրական ծովի հետ Հայաստանի հաղորդակցությունն հաստատելն է: Հայաստանի համար նաեւ ԵՄ-ին անդամակցելու գործընթացի մեկնարկումը, որը դուռ կբացի դեպի երկրի ապագա եվրաատլանտյան ինտեգրում:

Մի քանի բառով՝ ինչի մասին է զրույցը. ենթադրաբար, զանգահարողն Ուիթկոֆն է, որի հիմնական ուղերձն այն է, որ մինչեւ հոկտեմբերի 16-ին Վլադիմիր Զելենսկու՝ Վաշինգտոն ժամանելը եւ Սպիտակ տանը Թրամփին հանդիպելը ցանկալի կլինի, որ Պուտինը զանգահարի Թրամփին (իրականում այդպես էլ եղել է): Այնուհետ Ուիթկոֆը խոստովանում է, թե ինքն ինչ խոր հարգանք է տածում Պուտինի հանդեպ եւ ինչպես է Թրամփին համոզում, թե ռուսներն անկեղծորեն խաղաղություն են ուզում: Նաեւ հրահանգավորում է Ուշակովին, թե ռուսական կողմն ինչպես շողոքորթի եւ քծնի Թրամփին Պուտին-Թրամփ ակնկալվող հեռախոսազրույցի ընթացքում: Թերեւս ամենակարեւոր հանգամանքն էլ Թրամփ-Պուտին շփումից Ուիթկոֆի համար այն է, որ Պուտինն անձամբ Թրամփին ասի, թե ռուս-ուկրաինական հակամարտությունում էլ հնարավոր է Գազայի հակամարտության նման խաղաղության հասնելու 20 կետանոց մի ծրագիր կազմել, քննարկել: Այդ գաղափարին Թրամփի հավանությունը ստանալուց հետո Ուիթկոֆն արդեն կունենա գործելու ազատություն եւ Ուշակովի հետ կհամագործակցի խաղաղության հասնելու գործում:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՀԱՎԱՏՈ՞ՒՄ ԵՆ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ «ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆԸ»



Հայտնի է, որ հաջորդ շաբաթ Մոսկվա է այցելելու ԱՄՆ նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվեն Ուիթկոֆը: Նրա հետ Մոսկվա կգան նաեւ այլ ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր կապ ունեն «ուկրաինական գործերի հետ», որպեսզի ռուսների հետ քննարկեն հակամարտության կարգավորման ամերիկյան կողմի առաջարկած նոր պլանը: Նախատեսվում է, որ Ուիթկոֆը հանդիպելու է ՌԴ նախագահի հետ: Հնարավոր է, որ ամերիկյան պատվիրակության կազմում լինի նաեւ նախագահ Թրամփի փեսան՝ Ջարեդ Քուշները, որը համարվում է Ուիթկոֆի հետ՝ ամերիկյան խաղաղության նոր պլանի համահեղինակը: Ռուսական կողմը զգուշավոր, բայց ազդակներ է ուղարկում, որ հետաքրքրված է ամերիկացիների հետ հարաբերությունների վերականգնմամբ: Միաժամանակ ռուսական կողմում կա երկմտանք՝ արդյոք ԱՄՆ-ն անկեղծորե՞ն է ուզում հակամարտության կարգավորմանը հասնել, թե՞ ավելի շատ հետաքրքրված է կարգավորման ջանքերի մեդիաքարոզչական շոուով եւ ներկայացմամբ՝ գործող վարչակազմի՝ ներքաղաքական դաշտում ունեցած խնդիրները կոմպենսացնելու համար: Ռուսական մեդիափորձագիտական համայնքում հնչում են տեսակետներ, թե ԱՄՆ-ը պարզապես հերթական անգամ մանեւրում է, ինչպես եղավ Անքորիջյան հանդիպման դեպքում, երբ 70 տոկոսով ընդառաջ գնաց ՌԴ-ին, իսկ հետո խաղի մեջ մտան եվրոպացիները, ու սկսվեցին սրբագրումները: Արդյունքում ռուսական կողմը մնաց դժգոհ, եւ «սայլը տեղից չշարժվեց»: «Սա ընդամենը խաղ է, ամերիկացիները փորձում են իրենց խաղն առաջ տանել ու մոտիվացնել Ռուսաստանին, որ պատերազմը դադարեցնի: Մինչդեռ, իրականում, փորձում են այս խաղում իրենց շահերն առաջ մղել եւ չունեն անկեղծ ցանկություն՝ հակամարտության դադարեցման համար»: Ամերիկյան շահերն էլ հասկանալի են. ուզում է վերականգնել բիզնեսը ՌԴ-ի հետ՝ միաժամանակ չցանկանալով կտրուկ քայլեր անել իր վաղեմի արեւմտյան դաշնակիցների հանդեպ ու հայտնվել վատ վիճակում: Սակայն նաեւ, հաջորդ տարվա Կոնգրեսի ընտրություններին ընդառաջ, Սպիտակ տան վարչակազմին անհրաժեշտ է, որ գոնե արտաքին քաղաքական ճակատում շոշափելի արդյունքներ ունենա՝ հանրությանը ներկայացնելու համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋՐԱՅԻՆ

ՍԻԲԻՐԻ ԳԵՏԵՐԸ ԿՀՈՍԵ՞Ն ԴԵՊԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

ՆԱԽԱԳԾԻ ԾՆՈՒՆԴԸ

Օբի եւ նրա վտակ Իրտիշի ջրերի մի մասը դեպի Ամուդարյա, Սիրդարյա գետեր եւ Կարակումի ջրանցք շրջելու ծրագիրը ԽՍՀՄ կառավարական եւ գիտական շրջանակներում քննարկվել է, եւ մշակումներն սկսվել են 1950-ականների վերջին: Նախատեսվում էր ջրանցքներ, ջրամբարներ եւ պոմպակայաններ կառուցել, որոնք կարող էին 9-11 հազ. մ³/վրկ կամ տարեկան 25-27 կմ³ ջուր տեղափոխել: Նման քանակը լիովին բավարար էր՝ ԿԱ-ի տարածաշրջանում ջրի պակասը հագեցնելու համար: Այստեղ առավել ջրազուրկ էին ճանաչված Կարակալպակիան (Ուզբեկական ԽՍՀ) - ջրի տարեկան պակասը՝ 4-5 կմ³, Ֆերգանայի հովիտը (Ուզբեկական, Տաջիկական եւ Կիրգիզական ԽՍՀ-ներ) - 3 կմ³, Թուրքեստանը (Ղազախական ԽՍՀ) - 3-4 կմ³, Կարակումի անապատը (Թուրքմենական ԽՍՀ) - 10-12 կմ³:

Նախագծի գիտական ղեկավարումն ապահովում էին ԽՍՀՄ ԳԱ-ն, Հողի ինստիտուտը եւ Ջրային խնդիրների ինստիտուտը: Նախագիծը մշակել էր առաջատար գիտնականների ու ինժեներների մի ամբողջ աստղաբույլ (Բ. Պոլինով, Մ. Ժուկով, Ա. Շիկլոմանով, Գ. Ռոսոլիմո, Վ. Ռոմանովսկի եւ ուրիշներ): Նրանք վայելում էին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի քաղաքական հովանավորությունը եւ կուսակցական-պետական գործիչներ Դմիտրի Ուստինովի ու Հեյդար Ալիեւի աջակցությունը: 1986-ին ԽՍՀՄ ԳԱ-ի եւ խորհրդային կառավարության համատեղ որոշմամբ ծրագիրը հանվեց օրակարգից՝ «անհամաչափ մեծ տնտեսական ծախսեր եւ անընդունելի բնապահպանական ռիսկեր» հիմնավորմամբ:

ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Այսօր կրկին աշխույժ քննարկման փուլում է Արեւմտյան Սիբիրի գետերի ջրերը դեպի ԿԱ շրջելու ծրագիրը: Բաց ջրանցքների փոխարեն առաջարկվում է մինչեւ ԿԱ-ի սպառողները ջուրը հասցնել փակ ջրատար համակարգով, ինչը կնվազեցնի ջրի կորուստը եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը: Այժմ էլ նախագիծը ՌԴ-ի կառավարական եւ գիտական կառույցների դիտակետում է՝ գյուղատնտեսության եւ բնական ռեսուրսների նախարարություն, էներգետիկայի նախարարություն, «Ռոսվոդռեսուրսի» գործակալություն, ինչպես եւ «Ռուսգիդրո», «Ռոստեխ», «ԷՌԺԷԴԷ» պետական կորպորացիաներ: Գիտական աջակցությունն ապահովում են Ռուսաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի հաստատությունները՝ Ջրային խնդիրների ինստիտուտը (Վ. Դանիլով-Դանիլյան, Ի. Բալոնովսկայա, Յու. Վորոնցով), Աշխարհագրության ինստիտուտը (Ս. Գորդեեւ, Ա. Եկիմով), ԳԱԱ Սիբիրի մասնաճյուղը (Վ. Միխեեւ, Գ. Լարին): Ռուսաստանցի փորձագետները նախագիծը դիտարկում են որպես ԿԱ-ի հետ կապերն ամրապնդող, նոր եկամուտների աղբյուր, արդյունաբերությունը խթանող քաղաքական-տնտեսական գործիք:

ԿԱ-ում հիմնական շահառու պետությունն Ուզբեկստանն է, որի տնտեսության եւ ջրային ռեսուրսների նախարարությունները (Ժամշիդ Կուչկարով, Շավքաթ Համրաեւ) աշխույժ համագործակցության մեջ են ՌԴ գործընկերների հետ: Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոեւը միջազգային ասպարեզում բազմիցս անդրադարձել է իր երկրի եւ տարածաշրջանի ջրային կարիքների հարցերին: 2023 թվականին նա ՄԱԿ-ի ԳՎ-ում հայտարարեց, որ ջրի սուր պակասը լուրջ սպառնալիք է մեր տարածաշրջանի կայուն զարգացման համար: Հաջորդ տարի Բուխարայի ռոգման կոնֆերանսում նա ահազանգ հնչեցրեց՝ եթե միտումները պահպանվեն, Կենտրոնական Ասիան առաջիկա տարիներին կհայտնվի ջրային խոր անկայունության գոտում: Միջազգային կառույցները փաստում են տարածաշրջանի ջրային սթրեսը, սակայն թերահավատ են ջրերի տեղափոխման հարցում՝ զգուշանալով Արալի բնապահպանական աղետի կրկնության ռիսկից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ

Նախագիծը գնահատվում է 100 մլրդ ԱՄՆ դոլար, այն ծրագրվում է ավարտել 10 տարում: Փոխադրվող ջրի ծավալը նախկինի պես գնահատվում է տարեկան 25-27 կմ³, որն անհրաժեշտության դեպքում հնարավոր է ավելացնել Ենիսեյի եւ հյուսիսային մի քանի լճերի ջրերի հաշվին ու տարեկան ծավալը հասցնել մինչեւ 60 կմ³: Ջրի կորուստը նվազեցնելու եւ տնտեսական արդյունավետություն ապահովելու նպատակով նախատեսվում է օգտագործել արդի պոլիմերային ջրատար խողովակներ եւ պոմպակայաններ: Նախագծի հեղինակները վստահ են, որ ծրագրի իրականացմամբ կվերանա ԿԱ-ի գյուղատնտեսության համար ջրի սուր պակասը, ԿԱ-ի երկրների եւ ՌԴ-ի ձեռնարկությունները կստանան տեխնիկայի, սարքավորումների, նյութերի մատակարարման նոր պատվերներ, իսկ ռազմավարական տեսանկյունից ՌԴ-ի համար այն համարժեք կլինի նավթի եւ գազի արտահանմանը: Այդուհանդերձ, գնահատվում են նաեւ ռիսկերը. բարդ աշխարհագրական տարածքում մի քանի հազար կիլոմետր ջրատար եւ պոմպակայաններ կառուցելը, ջրի որակի, բնապահպանական պահանջների վերահսկողություն իրականացնելը պահանջում են ահռելի ծախսեր եւ բարդագույն ինժեներատեխնիկական լուծումներ:

Տնտեսագետները, բնապահպանները, միջազգային որոշ կառույցներ կոչ են անում՝ մանրակրկիտ գնահատել նախագիծը, քանի որ հնարավոր են մի շարք բացասական հետեւանքներ՝ Սիբիրի ջրային հավասարակշռության խաթարում, ճահճուտների էկոհամակարգերի ոչնչացում, կենսաբազմազանության նվազում, ջրի բաշխման հետ կապված միջպետական ու միջհամայնքային բախումներ, ջրի աղտոտում արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտանետումներով, ջրի զգալի կորուստներ՝ անորակ շինարարության եւ ոչ արդյունավետ կառավարման պատճառով: Արալ լճի դառը ճակատագիրը ԿԱ-ի ժողովուրդներին սովորեցրել է՝ ջրային համակարգերին մարդու անխոհեմ միջամտությունը բերում է կործանարար հետեւանքներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Նախագիծը միայն ինժեներական նախաձեռնություն չէ, այն նաեւ գլոբալ քաղաքական գործիք է: ՌԴ-ն կարող է ուժեղացնել իր ազդեցությունը ԿԱ-ում, իսկ Ուզբեկստանը՝ ապահովել ջրային ռեսուրսների կայունությունը: Նախագիծը ստացել է ՌԴ-ի եւ Ուզբեկստանի պաշտոնյաների աջակցությունը, իսկ մերժողները կասկածի տակ են դնում դրա քաղաքական երկարաժամկետ հուսալիությունը, քանի որ հարկավոր է կնքել բազմակողմանի համաձայնագրեր, կարգավորել ջրային իրավունքները, իրականացնել անաչառ բնապահպանական վերահսկողություն:

Այս պահին նախագիծը գիտական փորձաքննության փուլում է. իրականացվում է ջրային ռեսուրսների հաշվարկ, ջրատարի երթուղիների մոդելավորում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, եւ եթե հաստատվի նախագծի կենսունակությունը, այն կարող է մտնել գիտահետազոտական եւ կոնստրուկտորական աշխատանքների պետական ծրագրեր: Չնայած բնապահպանական ռիսկերին, գործընկերների հետ համաձայնեցումների ընթացակարգերի բարդությանը՝ ջրային հոսքերի վերահսկումը համարվում է տարածաշրջանի կլիմայական, տնտեսական եւ քաղաքական կայունության բանալին, ուստի ՌԴ-ն եւ ԿԱ-ի պետությունները պահպանում են նախագծի նկատմամբ ռազմավարական շահագրգռվածությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սիբիրի ջրերի տեղափոխման գաղափարի վերածնունդը լոկ տնտեսական կամ ինժեներական նախաձեռնություն չէ: Նման նախագծի իրականացման արդեն նախնական փուլում ՌԴ-ն եւ ԿԱ-ի երկրները այլ խաղացողների կողմից կներքաշվեն գլոբալ աշխարհատնտեսական խաղի մեջ՝ կլիմա, ջուր, ԿԱ-ի ապագա եւ այլն: Նախագծի հաջող իրագործումը, անկասկած, ՌԴ-ն կդարձնի «ջրերի տիրակալ», իսկ ԿԱ-ի առջեւ կբացի «ջրի դրախտի» դռներ: Մինչդեռ նախագծի ձախողումը կավելացնի ԿԱ-ի ջրազուրկ շրջաններից բնակչության միգրացիան, հաճախակի կդառնան ջրի աղբյուրների համար հարեւանների միջեւ բախումները, տնտեսական անկումը: Յուրաքանչյուր մեծ գետ ունի հակառակ հոսքեր. Սիբիրի էկոհամակարգերը կարող են անդառնալի փոփոխության ենթարկվել, իսկ քաղաքական ռիսկերը կպայթեցնեն տարածաշրջանի փխրուն հավասարակշռությունը: Նախագծի շուրջ կրքերը կարող են շիկանալ ցամաքած Արալի վրա կախված ամպերի նման: Սակայն հավատում եմ՝ տարածաշրջանի առաջնորդները խելամիտ հաշվարկների շնորհիվ կգտնեն կարիքի եւ հետեւանքի արանքում թաքնված շավիղը եւ կստանան կենարար ջուր՝ պահպանելով հացի պես անհրաժեշտ խաղաղությունը:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

«ԶՈՐՐՈ». ԱՆԿՐԿՆԵԼԻ ԱԼԵՆ ԴԵԼՈՆԸ՝ ԻՍՊԱՆԱՑԻ ԱՎԱՆՏՅՈՒՐԻՍՏԻ ԴԵՐՈՒՄ

Իսպանական բանավոր ավանդազրույցներում հայտնի ու սիրված հերոսներից է ավանտյուրիստ Զորրոն, որը հատկապես որպես հերոսական կերպար, ճանաչում է գտել հասարակ ժողովրդի շրջանում 17-րդ դարում: Եթե հավատանք լեգենդներին, Զորրոն եղել է հավաքական կերպար, այսինքն՝ այդ դիմակի տակ թաքնվել է ոչ թե մեկ մարդ, այլ՝ մի քանի, որոնք որոշել են պայքար մղել դասակարգային եւ այլ անարդարությունների դեմ: Զորրոյի կերպարը հաճախ է հայտնվել կինոռեժիսորների ուշադրության կենտրոնում:

Լեգենդի առաջին էկրանավորումը եղել է 1920 թվականին: Վերնագիրը՝ «Զորրոյի նշանը»: Սակայն մենք կանդրադառնանք 1975 թվականի էկրանավորմանը, որտեղ գլխավոր հերոսի դերում հանդես է եկել Ալեն Դելոնը, եւ այն սովետական տարիներին մեծ համբավ ունեցող ֆիլմերից էր: Գլխավոր հերոսն իսպանացի ավանտյուրիստ՝ սուսերամարտիկ Դիեգոն է: Նա հիանալի տիրապետում է սուսերին: Սակայն նրա աչքի առաջ սպանում են ընկերոջը՝ Միգելին, որը պետք է դառնար Նուեւա-Արագոնի նահանգապետը: Ընկերոջ դիակը ձեռքերին՝ նա երդվում է վրեժ լուծել: Ու այդ վրեժը լուծելու համար Դիեգոն հագնում է անորսալի ժողովրդական հերոս Զորրոյի հագուստը եւ սկսում է կրել նրա դիմակը: Ի դեպ, խորհրդային կինոյի պատմության մեջ այս էկրանավորումը համարվել է ամենից հաճախ դիտված արտասահմանյան ֆիլմերից մեկը: Ալեն Դելոնը Զորրոյի կերպարը մարմնավորելիս արդեն համարվում էր էկրանային սեքսիմվոլ: Նրա մարմնավորած Զորրոն համարվում է ամենահաջողվածներից մեկը, թեեւ շատ քննադատներ կարծում են, որ կարող էր ավելի լավ ներկայացնել կերպարը: Խորհրդային Միությունում՝ կինոթատրոններում այն դիտել է 55 միլիոն մարդ, Չինաստանում՝ 70 միլիոն: Կերպարը բավականին հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս: Խորհրդային Միությունում ֆրանսիական էկրանավորումն ընդունվել է, հաշվի առնելով գլխավոր հերոսի՝ ճնշող իշխող դասակարգերի դեմ մղած պայքարը, որը սրտամոտ էր պրոլետարական հասարակությանը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԲ ՊԱՑԻԵՆՏԸ ՆՄԱՆ ՔԻԹ Է ՈՒԶՈՒՄ, ԵՍ ՄԵՐԺՈՒՄ ԵՄ

Դիմածնոտային եւ էսթետիկ վիրաբույժ, օրթոդոնտ, «Սմարթ մեդ» կլինիկայի հիմնադիր-տնօրեն **Մեսրոպ Մանասյանը** «Հրապարակի» հետ զրույցում պատմում է իր երեք տարբեր, միեւնույն ժամանակ բարդ մասնագիտությունների մասին: Արցախցի բժշկի խոսքով, դրանք՝ երեքն էլ, բավականին պահանջված ու կարեւոր են ժամանակակից աշխարհում. «Սկզբնական շրջանում ավարտել եմ ստոմատոլոգիական ֆակուլտետը, այնուհետեւ՝ օրթոդոնտիա՝ օրդինատուրայում, այս ասպարեզում ունեմ ընթացքային ավելի քան 100 բուժառու, մյուս մասնագիտությունս դիմածնոտային վիրաբուժությունն է, ինչը ենթադրում է ռինոպլաստիկա, բլեֆարոպլաստիկա, իմպլանտացիա, օտոպլաստիկա, ֆեյս լիֆտինգ, օրթոգնատիկ վիրահատություններ, թքագեղձերի վիրահատություններ եւ այլն»:

- Հիմնականում ինչ վիրահատություններ եք կատարում: Որոնք են այսօր ամենապահանջված վիրահատական միջամտությունները:

- Այսօր 3 վիրահատություն եմ ունեցել՝ ֆեյս լիֆտինգ. այն դեմքի ամբողջական ձգում է: Հաջորդ վիրահատությունը շրջանաձեւ բլեֆարոպլաստիկա էր՝ վերին եւ ստորին կոպերի վիրահատություն, ճարպային պարկերի հեռացումով: Երրորդ վիրահատությունն էլ ատամնային իմպլանտացիա էր:

- Ի՞նչ արժե ֆեյս լիֆտինգը, բլեֆարոպլաստիկան՝ վերին եւ ստորին կոպերի վիրահատությունը:

- Ֆեյս լիֆտինգի արժեքը 800 հազար դրամ է, բլեֆարոպլաստիկան՝ 250 հազար դրամ:

- Քթի ռինոպլաստիկան մի ժամանակ ամենապահանջվածն էր: Այժմ շատ են քթի վիրահատությունների համար դիմում Ձեզ:

- Այո, նախկինում շատ-շատ էին դիմում, օրը 2-3 վիրահատություն էինք կատարում, նույնիսկ՝ 4-5, սակայն այժմ ռինոպլաստիկայի համար այնքան էլ շատ չեն դիմում, որովհետեւ բժիշկներն են նախ չափազանց շատացել: Այժմ օրվա մեջ քթի 1 վիրահատություն ենք կատարում: Ու ավելի շատ են երկրորդային ռինոպլաստիկայի դիմողները:

- Իսկ հնարավո՞ր է՝ հիմա սկսել են բնականը նախընտրել, այդ պատճառով այդքան էլ շատ չեն դիմում ռինոպլաստիկայի համար:

- Չէ, պարզապես վիրահատողների թիվն է շատացել: 5 հազարից ավելի քթի վիրահատող բժիշկ կա Հայաստանում:

- Ի՞նչ արժե Ձեզ մոտ ռինոպլաստիկան:

- Մեզ մոտ՝ «Սմարթ մեդ» բժշկական կենտրոնում, ռինոպլաստիկայի գները սկսվում են 300 հազար դրամից, ես՝ ինքս, վիրահատում եմ 600 հազար դրամով: «Սմարթ մեդը» բազմապրոֆիլ կլինիկա է, որտեղ կան հետեւյալ ծառայությունները՝ ընդհանուր վիրաբուժություն, լապորասկոպիկ, էնդոսկոպիկ վիրաբուժություն, լազերային վիրաբուժություններ, պլաստիկ, ԼՈՐ եւ դիմածնոտային վիրաբուժություն, պրոկտոլոգիա, ստոմատոլոգիա, կոսմետոլոգիա, բուժական մերսում, վերակենդանացման բաժանմունք, դիագնոստիկ բաժանմունք (կլինիկական լաբորատորիա, նոր սերնդի ԿՏ, թվային ռենտգեն հետազոտություն, ուլտրաձայնային հետազոտություն, էլեկտրասրտագրություն):

- Դուք Արցախից եք: Պատերազմից հետո արցախցիների պոտենցիալը գործի դրե՞լ եք Երեւանում.... արցախցի շատ պացիենտներ են դիմում Ձեր կլինիկա: Ի՞նչ ծառայություններից են օգտվում:

- Արցախից շատ այցելուներ ունենք, պարզապես պետությունը մեզ պետպատվեր չի տրամադրում, պարբերաբար դիմում ենք եւ ստանում մերժում, իսկ արցախցիները հիմնականում բժշկական ծառայություններից օգտվում են պետպատվերով:

- Հավանաբար, տարբեր ուղղվածությունների համար, այլ ոչ միայն պլաստիկ միջամտությունների:

- Այո, բնականաբար, ընդհանուր վիրաբուժություն, ԼՈՐ, ստոմատոլոգիա, սոնոգրաֆիա, համակարգչային տոմոգրաֆիա, ունենք նաեւ անալիզների համար նախատեսված լաբորատորիա: Պետությունը մերժում է մեզ, իսկ պատճառը հիմնավոր չի նշում: Երբ դիմում են արցախցիներ, շատերին ինչով կարողանում ենք, օգնում ենք՝ անվճար բուժօգնություն ենք ցուցաբերում՝ մեր հաշվին:

- Իսկ կոսմետոլոգիական ինչ ծառայություններ ունեք՝ բոտոքս, ֆիլերներ եւ այլն, եւ ինչ արժեն:

- Մեզ մոտ աշխատում են բժիշկ-կոսմետոլոգներ: Բոտոքսի եւ ֆիլերների արժեքը մեզ մոտ սկսվում է 25-30 հազարից մինչեւ 80 հազար դրամ: Մեզ մոտ ծառայությունները թանկ չեն:

- Մեծ է կոսմետոլոգիական ծառայությունների պահանջարկը:

- Այո, մեզ մոտ աշխատում են բացառապես բժիշկ-կոսմետոլոգներ, չունենք քոլեջ ավարտած մասնագետներ, մեզ մոտ աշխատում են պրոֆեսիոնալներ: Կատարում են նաեւ մեզոթերապիա, բիոռեւիտալիզացիա, բոտոքս, ֆիլերներ եւ այլն:

- Բժիշկ, իսկ լինո՞ւմ են դեպքեր, երբ հրաժարվում եք պացիենտի հետ աշխատել՝ տեսնելով, որ նա ունի, օրինակ, փոփոխական վարքագիծ կամ ցանկանում է մի բան, ինչը դեմ է Ձեր սկզբունքներին:

- Շատ-շատ են լինում նման դեպքեր: Ես ունեմ մի սկզբունք՝ արհեստական քիթ չեմ ստեղծում, երբ պացիենտը նման քիթ է ուզում, ես մերժում եմ, որովհետեւ ինձ համար, արտաքին տեսքին զուգահեռ, շատ կարեւոր է առողջությունը, մարդը պետք է նաեւ կարողանա շնչել: Ես կողմնակից եմ, որ քիթը լինի դեմքին սազական, միեւնույն ժամանակ՝ առողջ շնչառությամբ:

- Ասում են՝ շատացել է քթի երկրորդային, երրորդային ռինոպլաստիկայի պահանջարկը: Այսինքն՝ մեկ անգամ վիրահատում են անհաջող, բազմաթիվ առողջական, ինչպես նաեւ էսթետիկ բարդություններից հետո դիմում են այլ բժշկի՝ երկրորդային, երրորդային ռինոպլաստիկայի համար:

- Այո, նշեցի, որ քթի առաջնային ռինոպլաստիկայի պահանջարկը քչացել է, դրա փոխարեն շատացել է երկրորդային ռինոպլաստիկայի պահանջարկը: Ես հիմնականում վերջին շրջանում ավելի շատ կատարում եմ երկրորդային ռինոպլաստիկաներ՝ կողաճառից վերցված տրանսպլանտանտով:

- Ի՞նչ խորհուրդ կտաք բոլոր նրանց, ովքեր ցանկանում են փոփոխություններ կատարել դեմքի վրա:

- Նախ՝ բոլորին մաղթում եմ առողջություն, ապա խորհուրդ եմ տալիս գոնե տարին մեկ-երկու անգամ անցնել բուժզննում: Առողջությունն ամենաթանկ ու կարեւոր բանն է: Այս լուսավոր դարում խորհուրդ կտամ պացիենտներին՝ լավ ուսումնասիրել եւ ճիշտ քայլ կատարել բժշկի ընտրության հարցում: Խորհուրդ եմ տալիս բժշկի կատարած աշխատանքների մասին կարծիք կազմել տեսանյութերից, այլ ոչ թե լուսանկարներից:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 28.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՄԱՐՏԻ 1-Ի ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՆԻԿՈԼԸ ՎԵՐԱԾՎԵՑ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԲՌՆԱՊԵՏԻ

Տարիներ առաջ համացանցում մի խոսք կարդացի. «Որքա՞ն խելացի մարդկանց կհանդիպեի դժոխքում»: Հեղինակն իռլանդական ծագմամբ անգլիացի դրամատուրգ, Նոբելյան մրցանակակիր Ջորջ Բեռնարդ Շոուն է: Դա ասվել է անգլիականական եկեղեցու ղեկավարներից մեկին, երբ վերջինս նրան հայտնել է, թե՝ մահվանից հետո Շոուի հոգին ընկնելու է դժոխք: Չգիտեմ, թե որտեղ է գտնվում այժմ այն, բայց հաստատ մի բնորոշիչ բան կարող եմ ասել հայաստանյան իրականության մասին. գրագետ, հայրենասեր ու ակտիվ մարդկանց տեղը ոչ թե իրենց օջախում է՝ հարազատներով շրջապատված, այլ՝ կալանավայրում, ու այն էլ, չգիտես իրեն ում տեղը դրած, մեկ անձի հրահանգով:

Այո, մեկ անձի, ու այդ մեկ անձը վարչապետի պաշտոնը զբաղեցնողն է, որը 2018-ի գարնանը երկրային դրախտ էր խոստանում հայաստանցիներին, բայց մեր երկիրը վերածեց դժոխքի, որտեղ նորմալ մարդիկ կարող են զարմանալ, թե իրենք ինչու են դեռեւս գտնվում ազատության մեջ: Ուրիշ ինչպե՞ս կարելի է ընկալել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, դաշնակցական Գառնիկ Դանիելյանի արտահայտությունը. «Ուզում եմ ձեզ ուրախացնել, որ ես հարցաքննվել եմ, բայց ուզում եմ նաեւ ձեզ տխրեցնել, որ մինչեւ հիմա ազատության մեջ եմ, բայց կարող եմ եւս մի անգամ ձեզ ուրախացնել, որովհետեւ համոզված չեմ, որ շատ երկար ժամանակ կլինեմ ազատության մեջ»: Եվ նման բանը ցավով ասում է «ժողովրդավարության բաստիոնում» ժողովրդից առաջնային մանդատ ստացած պատգամավորը:

Չէ, ի տարբերություն Բեռնարդ Շոուի, դաշնակցական պատգամավորը չի երազում ընկնել կալանավայր, որովհետեւ ոչ մի ադեկվատ անձ նման բան չէր երազի: Նույնիսկ ռուսաստանյան «օրենքով գողերը», որոնց գիտակից կյանքի մեծ մասը երբեմն անցնում է նման վայրերում, հաճախ փորձում են փախչել այդտեղից, ուր մնաց, թե նման բան ցանկանար գրագետ, հայրենասեր անձը: Բայց նա շատերից լավ գիտի, որ Հայաստանում ժողովրդավարության անվան տակ հաստատվել է բռնապետություն: Որ իշխանության ներկայացուցիչները՝ իրենց գլխավորի թամադայությամբ, կարող են ամեն ինչ անել, նույնիսկ՝ թքել մարդկանց վրա, հրապարակավ սպառնալ, ծեծի ենթարկել, ու նրանց նկատմամբ ոչինչ չի ձեռնարկվի: Իսկ եթե ընդդիմադիր որեւէ գործիչ անի Նիկոլի կամ նրա ենթակաների արածի մեկ տասնորդական չափի որեւէ բան կամ ասի որեւէ խոսք, չի կարող չհայտնվել կալանավայրում:

Իհարկե, նախկիններն Աստծո գառ չէին, եւ «բեսպրեդել» հասկացությունը ծագել է նրանց օրոք: Բայց ողջ խնդիրն այն է, որ հենց այդ պատճառով ժողովուրդը մերժեց Սերժին ու իր գլխին դրեց Նիկոլին: Բայց դա արեց ոչ թե նրա համար, որ Նիկոլը կրկներ նախկինների արածն ու ասածը, այլ՝ որպեսզի այդ ամենը վերացվեր: Բայց պարզվեց, որ ժողովրդի աջակցությունը վայելող Նիկոլը վերածվեց նույն այդ ժողովրդի թշնամու: Մարտի 1-ի ընդդիմադիր Նիկոլը վերածվեց հունիսի 12-ի բռնապետի՝ ժողովրդի աջակցությունը փոխարինելով ոստիկանության ծառայությամբ, ժամանակին փողոցում ազատ քայլող ղեկավարը՝ բազմաթիվ թիկնապահներով պահպանվողի: Մարդ, որն իր անձի անվտանգությունը վերածել է ազգային անվտանգության գործոնի:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am